Azg
18 ՅՈՒՆԻՍ 1994. ՇԱԲԱԹ # 114 (617)

Սենատը հաստատեց 75 միլիոնի հատկացումը Հայաստանին

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ANCA: Միացյալ Նահանգների սենատի համաղաձասխան ենթահանձնախումբն այսօր առավոտյան նիստում հաստատեց Հայաստանի Հանրապետությանը 75 մլն դոլար օգնություն հատկացնելու մասին սենատոր Միչ Մակկոնելլի ներկայացրած նախագիծը, որը ուժգնորեն դաշտպանեցին սենատորներ Ֆրանկ Լոտենբերգը, Ֆիլ Գրամմը, Բարբրա Միկուլսկին, Ալֆոնս դ'Ամատոն: Միևնույն նիստի ընթացքում մերժվեց սենատոր Պատրիկ Լիհիի առաջարկը՝ մեղմացնել Ադրբեջանի նկատմամբ դրված ամերիկյան օգնության արգելքը, որը այն առնչում էր Հայաստանի շրջափակմանը: Բացի Հայաստանից, ենթահանձնաժողովը համաղաձասխան գումարներ հանձնարարեց, հատկացնել Վրաստանին, Ուկրաինային եւ նախկին խորհրդային այլ երկրների, Բիլ Քլինթոնի վարչության ընդհանուր 950 մլն դոլարի գումարի դիմաց՝ բավարարելով 839 միլիոնով: Հիշեցնենք, որ Ադրբեջանի նկատմամբ գործող արգելքն համաձայն, Միացյալ Նահանգների օգնությունից կարող են օգտվել այդ երկրի միայն ոչ կառավարական ծրագրերը:

ՇՐՋԱՆ

Ալի Աքբար Վելայաթի. Մենք չենք դաշտանում ահաբեկչությունը

ԿՐԱՆ ՍՈՆՏՍԼԱ, ՇՎԵՅՑԱՐԻԱ, 17 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՏԵՆՊՐԵՍ: «Մենք ընդհանուր շահեր ունենք միջազգային ասպարեզում, վաղուց ի վեր սովորել ենք ապրել միասին», Մոսկվայի եւ Թեհրանի փոխհարաբերությունների վիճակը այսպես գնահատեց Իրանի արտաքին գործերի նախարար Ալի Աքբար Վելայաթին: Իրանի կողմից Ռուսաստանին դարձելու խնդրի լուծումը, որը, նրա ասելով, կազմում է մոտ մեկ միլարդ դոլար, լրացուցիչ ազդակ կհաղորդի երկկողմ տնտեսական կապերին, ընդգծեց Իրանի արտաքին գործերի նախարարի գերատեսչության ղեկավարը:

Մամլո ասուլիսը տեղի ունեցավ Մոնտանայում անցկացվող միջազգային համաժողովի շրջանակներում:

Անդրադառնալով Տաջիկստանի իրադրությանը, Ալի Աքբար Վելայաթին հաղորդեց, որ իրանական կողմը դաշտատս է նպաստել Տաջիկստանի կառավարության եւ ընդդիմության բանակցությունների հերթական փուլը մոտ օրերս Թեհրանում անցկացնելուն:

Ալի Աքբար Վելայաթին հայտարարեց, որ Իրանը դաշտատս է մյուս պետությունների հետ ավելի սերտորեն փոխգործակցել միջազգային ասպարեզում: Այդ առնչությամբ նա «Միանգամայն անհիմն» անվանեց իր երկրի հասցեին արտահայտած այն մեղադրանքները, թե Իրանը մեղսակից է ահաբեկչությանը, ավելացնելով. «Մենք ոչ միայն չենք դաշտանում ահաբեկչությունը, այլեւ ինքներս ենք դրա զոհը»:

Վերջում Իրանի նախարարը շոշափեց մարդու իրավունքների հարցը: Նրա կարծիքով, Արեւմուտքը պետք է «իրատեսություն» դրսեւորի այդ հարցում, եւ ընդունի, որ չի կարող լինել «մարդու իրավունքների համաչափակ հասկացություն»: Անհրաժեշտ է նկատի առնել ազգային յուրահատկություններն ու ավանդույթները, «քանի որ մուսուլմանական ժողովուրդներն իրենց արժեքներն ունեն»:

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

«Մոսկվան որոշ դաշնաններ ձեռնտու չեն Ադրբեջանին»

ԲԱՔՈՒ, 17 ՀՈՒՆԻՍ, ՄՆԱՐԲ: Ադրբեջանի դաշտատության նախարար Մամեդ Օաֆի Մամեդովը հերքեց զանգվածային լրատվության միջոցների այն հաղորդումները, թե ներկայումս Մոսկվայում բանակցություններ են վարում Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի զինվորական փորձագետները: «Ազատություն» ռադիոյի թղթակցի հետ հարցազրույցի ժամանակ նա հաղորդեց, որ Ռուսաստանի մայրաքաղաքում այս օրերին աշխատում են այդ երկրների արտաքին քաղաքական գերատեսչությունների ներկայացուցիչները: Անդրադառնալով դարաբաղյան հակամարտության կարգավորման Ռուսաստանի ծրագրին, նախարարը նշեց, որ Մոսկվան ցանկանում է որպես միջնորդ օգնել գործին, սակայն, ասաց նա, նրա որոշ դաշնաններ ձեռնտու չեն Ադրբեջանին: Մամեդովը կրկին հաստատեց դաշտոնական Բաքվի ավանդական դիրքորոշումը, որը հանգում են Ադրբեջանի օկուպացված տարածքների ազատմանը: Պատասխանելով այն հարցին, թե այսօր ինչպիսին է իրավիճակը ռազմաճակատում, Մամեդովն ավելի քան հակիրճ դաշտատխան տվեց. «Ռազմաճակատում ամեն ինչ լավ է»:

ԱԴՐԲԵՋԱՆ

Լեզգիները ընդվզում են Կուսարիի շրջանում

ԲԱՔՈՒ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: «Ազատություն» ռադիոկայանի ադրբեջանական ծառայությունն իր հունիսի 16-ի թողարկումներում նշում է, որ լեզգիական «Սադվալ» ազգային շարժման ղեկավարները փորձեր են անում աղդակայունացնող գործողություններ ծավալել անմիջականորեն Ադրբեջանի տարածքում: Ըստ ռադիոկայանի, թիրախ է ընտրվել Կուսարի շրջանը, որ հիշյալ կազմակերպության անդամները ազգամիջյան բշնամանք են սերմանում եւ կազմակերպում սադրիչ գործողություններ տեղական իշխանության մարմինների նկատմամբ: Իբրեւ վերջերյալի աղացույց է նշվում հունիսի 14-ին Կուսարիի շրջանի Փիրազ գյուղում արձանագրված միջադեպը:

Տեղի ոստիկանության ներկայացուցիչները, որ գյուղ էին ժամանել զորակոչից խուսափողներին հայտնաբերելու համար, հանդիպեցին բնակչության կողմից դիմադրության ու վիրավորանքների: Դիմադրությունը ղեկավարել է Դաղստանի արտգործնախարարության աշխատակից Ֆաիգ Միրզաբեյովը: Զեռնամարտի մտնելով ոստիկանության ներկայացուցիչների հետ բնակիչները փորձել են խլել նրանց զենքը: Այնուհետեւ նրանք հարձակում են նախաձեռնել տեղի ոստիկանության բենզին վրա եւ փորձել գրավել այն: Ոստիկանության մի քանի աշխատակիցներ մարմնական վնասվածք են ստացել, իսկ երկուսը ծանր վիճակում տեղափոխվել են հիվանդանոց: Տեղի բնակիչներից մեկը զոհվել է:

Դեղմի առթիվ Ադրբեջանի նախագահի հրամանագրով ստեղծվել է պետական հանձնաժողով՝ փոխվարչապետ Աբաս Աբաստովի գլխավորությամբ: Դատախազությունը քրեական գործ է հարուցել այս միջադեպի կապակցությամբ:

ՄԵՐՁԱԿՈՐ ԱՐԵՎԵԼՔ

Քրդամետ կուսակցությունն արգելվեց Թուրքիայում

Մարտի 27-ի տեղական ընտրություններին նախօրյակին Թուրքիայի իշխանությունները Դեմոկրատական կուսակցության դեմ ծավալված հալածանքների արդյունքում հունիսի 16-ին հասավ իր տրամաբանական վախճանին: Թուրքիայի սահմանադրական դատարանը հատուկ որոշմամբ արգելեց այս կուսակցության հետագա գործունեությունը՝ մեղադրելով նրան «երկրի տարածքային ամբողջականության դեմ ուղղված գործողություններում եւ ահաբեկիչներին սատար կանգնելու մեջ»: Դատարանը դատգամավորական իրավունքներից զրկեց նաեւ Թուրքիայի Ազգային մեծ ժողովում DEP-ի խմբակցության 17 անդամներից 13-ին: Թեչ վերաբերում է մնացած 4-ին, նրանք կանխազգալով դատահեղինը, նախապես արդեն հրաժարական էին տվել խմբակցությանը, հետեւաբար դատարանը գտավ, որ նրանք խորհրդարանում այսուհետ հանդես կգան որպես անկախ դատգամավորներ: Իսկ իրավունքը կորցրած դատգամավորներից 5-ը անցյալ մարտ ամսից ի վեր կալանքի տակ են գտնվում, նույն մեղադրանքով: Այստեղ տեղին է հիշեցնել, որ այս կուսակցությունը հարգ ժողովրդի իրավունքների համար դատարան է հաղորդում քրդական ճանապարհով եւ նրա արգելումն ամենից առաջ հետաքրքրում է շարժումը քաղաքական դեկավարությունից զրկելու եւ այն լոկ ահաբեկչության դրսեւորում ներկայացնելու նպատակով:

Մ. ՆԱՀԱՆԳՆԵՐ

Բ. Դոլը նախագահական թեկնածո՞ւ

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 15 ՀՈՒՆԻՍ, NYT: Հստակ քայլ կատարելով դեպի 1996 թ. նախագահական ընտրություններում Հանրապետական կուսակցության թեկնածուի ընտրության, Մ. Նահանգների սենատոր Բոբ Դոլը չորեքշաբթի օրը հայտարարեց, թե իր օգնականներն այդ ուղղությամբ ոչդաշտոնական ձեւով հարցում են անցկացնում երկրի ստատեղծների շրջանակում, մյուս թեկնածուներին կանխելու նպատակով: Այսուհանդերձ, սենատորը շեշտեց, որ դեռեւս չի վճռել իր թեկնածությունը ներկայացնե՞լ, թե ոչ, սակայն ցանկանում է այդ հարցի դատասխանը դարձել ուրիշ թեկնածուներից առաջ, իրեն վերադահելով այդ մասին միեւնույն առաջիկա փետրվար ամիսը վճռելու կայացնելու իրավունքը:

Հիշեցնենք, որ սենատոր Դոլը Սենատի Հանրապետական խմբակցության ղեկավարն է եւ առայժմ գլխավոր դեմքն այդ կուսակցության մեջ: Նա 70 տարեկան է:

ՀԱՆՐԱՇԱՀԱՔ

ԱՀՄ-ն դիմում է 88-ի մեթոդներին

«Քաղաքական դայքարի դաղաքանեական փուլն ավարտվել է, եւ մենք արդեն ենք դայքարը տեղափոխել հրադարակ»: Այս խոսքերով սկսեց իր ելույթը ԳԽ դատգամավոր Սմբատ Հակոբյանը երեկ Ազատության հրադարակում տեղի ունեցած հանրահավաքի ժամանակ: Հանրահավաքի հիմնական նպատակը ոչ միայն Սահմանադրության նախագահական տարբերակի դեմ դայքարն էր, այլեւ ընդհանրապես նախագահական համակարգի: Ըստ Շավարշ Քոչարյանի, ներկայումս Հայաստանը արդեն արձանագրված բռնադեսություն է եւ դրանից ազատվելու ելքը «բայֆայից» ձերբազատվելն է: Սակայն ելույթ ունեցողները մերժեցին հեղաշրջման եւ բռնի ուժի մերոդները, շեշտը դնելով ժողովրդի քաղաքական ակտիվության բարձրացման վրա: Որո՞նք են առաջ քաշված խնդիրները. 1. վերացնել նախագահական կառավարման ձեւը, 2. նշանակել ԳԽ վաղաժամկետ ընտրություններ, 3. ստեղծել ժամանակավոր կառավարություն: Մի խոսքով, հանրահավաքն անցավ «ոչ նախագահական Սահմանադրությանը» կարգախոսով, որին ուղղված ելույթները երբեմն-երբեմն ընդհատվում էին փորձիչ ունկնդիրների կարճատեւ ծափահարություններով:

ՀԱՄԱՈՏ

Դարձյալ ատոմակայանների հարց

ՓԱՐԻԶ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Միտերանը հայտարարել է, որ ատոմակայանների հարցը ուշադրության կենտրոնում կլինի հունիսի 24-ին եւ 25-ին Կորֆու կղզում կայանալիք եւրոդական խորհրդի դեսությունների եւ կառավարությունների ղեկավարների հանդիդման ժամանակ: Այսօր Եւրախորհուրդը դատրաստ է իր վրա վերցնել Չեռնոբիլի փակման հետ կապված ծախսերը: Այդ նպատակի համար կեւր դահանջում է 3-14 մլրդ դոլար: Արեւմտյան փորձագետներն իրենց հերթին դահանջում են նախ եւ առաջ կրճատել էլեկտրաէներգիայի հսկայական կորուստները: Ֆրանսիայի գնահատականներով, որի բնակչության թիվը հավասար է Ուկրաինայի բնակչության թվին, վերջինս չորս անգամ ավելի էլեկտրաէներգիա է օգտագործում, քան Ֆրանսիան:

Թուրքական զորքեր Բոսնիայում

ՄԱԿ, 17 ՀՈՒՆԻՍ, ԱՐՏԵՆՊՐԵՍ-ՌՏԱՐ: Նախկին Հարավսլավիայում իր ռազմական ներկայությունն աղահովելու նպատակով Անկարայի զորամասերի երկարատեւ ջանքերից հետո թուրքական զորքերը վերջապես ոտք կդնեն Բոսնիայի հողին: Այդ մասին ասվում է ՄԱԿում Թուրքիայի մշտական ներկայացուցչության հինգշաբթի օրն այստեղ տարածած հաղորդագրության մեջ:

ԴԱՐԱԲԱԳԻ ՀԱՐՑ

Տոնիան խիստ քննադատում է միջազգային կազմակերդություններին

ԲԱՔՈՒ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: «Ազատության» թերթին տված հարցազրույցում Ադրբեջանում Ռուսաստանի արտակարգ եւ լիազոր դեսպան Վալտեր Շոնիան, անդրադառնալով դարաբաղյան հակամարտության կարգավորման ռուսական ծրագրին, նշել է, որ այդ ծրագիրը զուտ Մոսկվայի շահերով չի թելադրված ու դատարադված անդրկովկասյան դեկավարությանը: Ըստ նրա, Կազիմիրովի երկու տարվա աշխատանքի հիմնական նպատակն է նդել առավելագույնս մոտեցնել կողմերի դիրքորոշումներն ու ընդհանուր հայտարարի բերել դրանք:

«Վերցնենք, օրինակ, այսդիսի մի դրան, ասել է Շոնիան, ինչ-որ մեկի խելքին փչել է հանրաքվեներ անկախ հայտարարել, իսկ մյուս կողմի համար դա ընդունելի չէ: Այստեղ կա շատ կարեւոր մի նշում. Ղարաբաղի կարգավիճակի հարցը կլուծվի փոխզիջման ճանապարհով: Սա շատ կարեւոր արտահայտություն է»: Թղթակցի այն հարցին, թե դա արդյոք չի՞ նշանակում Ադրբեջանի կազմից Ղարաբաղի դուրսբերում եւ ինքնավարության լուծարում, Շոնիան դատասխանել է. «Այո, բայց Ռուսաստանի ծրագիրը չի շոշափում Ղարաբաղի կարգավիճակի հարցը: Սա նախնատաց կրակի դադարեցման ծրագիր է. Լեռնային-Ղարաբաղից դուրս գտնվող տարածքների ազատման ու փախստականների վերադարձման ծրագիր»:

Անդրադառնալով միջազգային կազմակերդությունների այս ուղղությամբ ծավալած գործունեությանը, Շոնիան մասնավորապես նշել է. «Երբ օգնելու ցանկություն ունեն, բայց օգնեն, ոչ թե շտապսեն: Նրանք ցանկանում են այնպես ներկայացնել իրենց, թվա ավելի շատ են աշխատանք տանում, քան Ռուսաստանը: Դա հայտնի քաղաքականություն է: Ընդամենը ցանկանում են էժանագին կաղնյալ դիպչել ուրիշի, տվյալ դեպքում Ռուսաստանի ձեռքերով: Մենք չենք ձգտում փառի, աղմկալի արարողությունների, բայց ոչ ոք թող չփորձի համոզել Ռուսաստանին, թե նրա նախաձեռնությունները գին չունեն: Առում են, թե միակողմանի ջանքերը դեմ չեն: Ուրեմն եկեք երկկողմանի ջանքեր գործադրենք, եթե դուք քաղաքական իմդոտենցիաներ չեք»:

Նման կտրուկ արտահայտությունը դեսպանը բացատրել է նրանով, որ միջազգային կազմակերդությունները արժանի են դրան:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

տեղական

ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Այնուամենայնիվ, փաստորեն փոխզիջում

Փոխզիջում կլինի՞, թե ոչ: Գերագույն խորհրդի պատգամավորներն այս երկընտրանքի առաջ կանգնեցին չորսօրյա քննարկումների արդյունքում: Վերջին օրվա թե՛ ելույթների, թե՛ ամփոփիչ զեկուցումների գլխավոր թեման Սահմանադրության մեկ փոխզիջումային տարբերակի ընդունումն էր: Հանրաքեսության նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանը մի անգամ ևս հայտարարեց, որ Սահմանադրության հարցում որևէ փոխզիջում չի կարող լինել, և մեկ անգամ ևս նշեց, թե գաղափարախոսության և իրավագիտության մեջ փոխզիջում գոյություն չունի: Նախագահը, մնալով լավատես, հույս հայտնեց, որ ոչ մի փակուղի չկա, և ժողովուրդը հանրաքվեի միջոցով կընդունի լավագույն Սահմանադրությունը: Ի տարբերություն նախագահի, ելույթ ունեցողների մեծ մասը հակված էր մեկ ընդհանուր Սահմանադրության նախագիծ ընտրելու գաղափարին: Ընդորում, նրանց մի մասն առաջարկում էր որպես հիմք ընդունել վեցյակի տարբերակը, մյուս մասը՝ Սահմանադրական հանձնաժողովինը: Մելս Սահակյանի կարծիքով, այդպիսի տարբերակ ընդունելու համար այնուամենայնիվ պետք է, որպեսզի փոխզիջումը լինի նախագահի կողմից: Այդ հարցում նախագահի հետ իր անհամաձայնությունը հայտնեց նաև Գերագույն խորհրդի քարտուղար Վարազդատ Ավոյանը: Սահմանադրության ընդունման հարցում հիմնական շեշտը դրվեց Գերագույն խորհրդի կողմից ընդունելուց հետո այն հանրաքվեի դնելու վրա: Թեև պատգամավոր Գագիկ Հովհաննիսյանն իր ելույթում նշեց, թե Սահմանադրությունը հանրաքվեի պետք է դնել Սահմանադիր ժողովի կողմից ընդունելուց հետո: Ռաֆիկ Պետրոսյանն առաջարկեց մի որոշման նախագիծ, ըստ որի Գերագույն խորհուրդը պետք է նախ հանձնարարեր Սահմանադրական հանձնաժողովին մինչև 1994 սեպտեմբերի 15-ը մշակել ՀՀ Սահմանադրության միասնական նախագիծ, այդ ընթացքում հանձնաժողովը համալրելով ԳԽ-ում ներկայացված հասարակական-քաղաքական կազմակերպությունների ներկայացուցիչներով և նախագծերի հեղինակներով, իսկ այնուհետև, հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ ընդունված նախագիծը ներկայացնել վերը նշված ժամկետում, Գերագույն խորհրդի քննարկմանը և ձայների 2/3-ով ընդունելուց հետո 1994 թ. հոկտեմբերի 15-ին նշանակել հանրաքվե: Այս առաջարկը պատշաճեցին նաև այլ ելույթ ունեցողներ, ճշտելով միայն, թե հանրաքվեն կարելի է անցկացնել սեպտեմբերի 21-ին՝ Հայաստանի անկախության օրը:

Իր հերթին, ԳԽ-ում ՈԱԿ խմբակցության ղեկավար Պետրոս Քաջախյանն առաջարկեց նախագծերը նախ քննարկման դնել խորհրդարանի տարբեր հանձնաժողովներում՝ յուրաքանչյուրը Սահմանադրության իր հատվածի մասին կարծիք արտահայտելու համար: ՀՅԴ անդամ Ռուբեն Հակոբյանը, ներկայացնելով վեցյակի կողմից ընդունված հայտարարությունը, նշեց, որ Քաղաքացիական համաձայնության Սահմանադրության խորհուրդը հայտարարում է, թե ստեղծված իրավիճակում փակուղուց դուրս գալու ելքը Սահմանադրությունը ԳԽ-ի կողմից ընդունելն է: Հաստատեց, որ ընդունման այդ կարգը համաձայնեցնում է գործող հիմնական օրենքին: Ինչևէ, Գերագույն խորհուրդը այդպես էլ չկարողացավ որևէ նախագիծ ընդունել, բացառությամբ այն որոշման, ըստ որի Սահմանադրական հանձնաժողովի կազմը համալրվեց Գերագույն խորհրդում ներկայացված հասարակական-քաղաքական այն կազմակերպությունների ներկայացուցիչներով, որոնք մինչ այդ ներկայացված չէին Սահմանադրական հանձնաժողովում. նույն որոշմամբ ԳԽ նախագահը նույնպես ընդգրկվեց այդ հանձնաժողովի կազմում, որպես համանախագահ: Առաջարկներ եղան նաև, որպեսզի Սահմանադրական հանձնաժողովին լրամշակման հանձնվեն Սահմանադրական հանձնաժողովի և վեցյակի նախագծերը: Բայց որևէ կոնկրետ արդյունքի չհասնելով, խորհրդարանը որոշեց արտահերթ նիստը շարունակել հունիսի 27-ին:

Ա. Հ.

ՏԵՍԱԿԵՏ

Ինչպիսի՞ խաղաղության է ձգտում Ռուսաստանը

Արդեն ավելի քան մեկ ամիս է, ինչ Լեռնային Ղարաբաղում ռազմական ակտիվ գործողություններ չեն ընթանում: Հաստատված հրադադարը միայն երբեմն-երբեմն խախտում են ադրբեջանական առանձին կազմավորումներ, սակայն ընդհանուր պատկերը դրանից չի փոխվում՝ ճակատներում հանգիստ է: Անշուշտ, սա ամենից առաջ ռուսական խաղաղարար նախաձեռնության արդյունքն է, քանի որ կողմերից որևէ մեկի համար այսպես թե այնպես դժվար է խախտել հրադադարը, որը ձեռք է բերվել Ռուսաստանի միջնորդությամբ, և ընդհանուր պատկերը «փչացնում» են միայն ադրբեջանական այն ընդդիմադիր կազմավորումները, որոնք կտրականապես դեմ են Ադրբեջանի ռուսական կողմնորոշմանը:

Սակայն այս անհախտանելի կայուն ու տեսական հրադադարը, որքան էլ առաջին հայացքից զարմանալի է, ամենևին էլ հույս չի ներշնչում, թե խաղաղության ժամը մոտ է: Թեև կողմերը պարբերաբար հայտարարում են, թե հնարավոր է, որ սա պատերազմի վերջին տարին լինի, այնուհանդերձ այդ ենթադրություններին այնպես ոչ ոք չի հավատում, և սա ոչ թե այն պատճառով, որ իրականում հակամարտող կողմերը չէ, որ որոշելիս են խաղաղության ժամն ու պայմանները, այլ այն պատճառով, որ առ այսօր պատերազմը չի լուծել իր առջև դրված խնդիրներից ոչ մեկը: Երբ ամփոփելու լինենք պատերազմի ներկա փուլի արդյունքները, առաջ պատկերը հետևյալն է. Ղարաբաղը գրավել է Ադրբեջանի յոթ շրջան, ադրբեջանցի հարյուր հազարավոր փախստականների ալիքը հասել է Բաքու, այդ պեսությունը կորցրել է իր տարածքների մոտ 10 տոկոսը, ընդ որում, լավագույն անասնաղաճական և խաղողագործական շրջանները, ներքին անկայունությունը հանգեցրել է նրան, որ արևմտյան խոշորագույն նավթային ընկերությունները խուսափում են ֆինանսական մեծ ներդրումներից և այլն: Պատերազմի հետևանքով Ղարաբաղի տարածքի մոտ մեկ երրորդը հիմնովին ավերված է, բոլոր տրամադրելի ծառայությունները բանակում, որի շարքերն օրեցօր նոսրանում են, շրջափակման պատճառով Հայաստանի և Ղարաբաղի տնտեսությունները կազմալուծված են, բնակչության արտահոսքը մեծ չափերի է հասնում և այլն:

Մինչդեռ ինչպիսին էլ լինի վերջնական խաղաղությունը, այն պետք է բավարարի հետևյալ պայմաններին. առաջին հերթին որ պատերազմն ավարտվելու է ռուսական սցենարով, առայժմ Ռուսաստանը թույլ չի տա, որ կողմերից որևէ մեկը հաղթի, և խնդիրը լուծվի վերջնականապես: Ղարաբաղն այն կղզյակն է, որի միջոցով անհրաժեշտության դեպքում Ռուսաստանը միշտ էլ կարող է պատերազմ սկսել Անդրկովկասում, և Ռուսաստանը երբեք ձեռքից բաց չի թողնի այդ հնարավորությունը՝ հարցը լուծելով վերջնականապես: Իսկ սա նշանակում է, որ ռուսները ձգտելու են Ղարաբաղին տալ այնպիսի կարգավիճակ, որը շատ էլ չտարբերվի վառոդի տակառից՝ պայմանով, իհարկե, որ պատույգը լինի Ռուսաստանի ձեռքին:

Երկրորդ՝ ռուսները ոչ մի կերպ թույլ չեն տա, որ Ղարաբաղը վերադառնա նախկին՝ ինքնավար մարզի կարգավիճակին: Բանն այն է, որ այդ դեպքում հետագայում, երբ անհրաժեշտ լինի, դժվար կլինի ղարաբաղցիներին համոզել մեկ անգամ ևս պայքար սկսել անկախության համար, երբ նախորդ փորձը չի պսակվել գոնե մասնակի հաջողությամբ: Բացի այդ, երբ վրաց-աբխազական կամ օս-ինգուշական հակամարտությունների դեպքում դեռ հնարավոր է խոսել փախստականների վերադարձի մասին, առա ղարաբաղա-ադրբեջանական պատերազմի պարագայում վերադարձի կամուրջներն այրված են:

Ասվածից հետևում է, որ Ռուսաստանը ձգտելու է Ղարաբաղի համար սահմանել մի կարգավիճակ, որն անհամեմատ ավելի մեծ իմքնուրույնություն կտա վերջինիս՝ պահպանելով հետագայում ևս լարվածության օջախի վերածելու հնարավորությունը: Ճիշտ է, Ռուսաստանի համար գոյություն ունի նաև պահեստային տարբերակ՝ Զանգեզուր: Սակայն լավ խաղացողը երբեք չի զոհաբերում այն, ինչը դեռ կարող է պահպանել: Դեռևս՝ «ում է արդյոք սա, որ Ղարաբաղը կարող է վստահաբար գոնե մասնակի հաղթանակի հույս ունենալ: Միայն այն դեպքում, եթե պատերազմն այս փուլում ավարտվի: Բայց ադրբեջանական բանակը ներկայումս համալրվում է հարձակողական բնույթի նորագույն տեխնիկայով, մինչդեռ ռուս-ադրբեջանական սահմանն առանց Ռուսաստանի գիտության չեն կարող խախտել «օձն իր ոտքով, հավքն իր թևով»: Իսկ սա նշանակում է, որ ամենայն հավանականությամբ ներկայիս հրադադարը վերջինը չէ, և դեռևս չի հաստատվել այն պահը, երբ հնարավոր լինի խաղաղություն հաստատել: Խաղաղություն, որը բավարարի վերոհիշյալ երկու պայմաններին:

ԱՐՄԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

ՍԻԹՊԵՏԱԿԱՆ

Անգլիա. Ծանոթություն բանկային համակարգին

Լոնդոնից ստացված տեղեկությունների համաձայն, հունիսի 7-ին Հայաստանի կենտրոնական բանկի կառավարիչ Բագրատ Ասատրյանը Լոնդոն էր ժամանել Անգլիայի կենտրոնական բանկի հրավերով, մասնակցելու վերջինիս հիմնադրման 300-ամյակի տոնակատարություններին:

Պատշաճական արարողություններից բացի Բագրատ Ասատրյանը ներկա է գտնվել բանկի հիմնադրմանն ու զարգացմանը նվիրված հատուկ խորհրդակցությունը, որի ընթացքում առիթ է ընծայվել ծանոթանալու այլ երկրների իր գործընկերների հետ, որը, ըստ որոշ Ասատրյանի, «չափազանց օգտակար էր մեր նորաստեղծ պետության համար»:

Միաժամանակ, Լոնդոնի հայկական դեսպանատունը Բագրատ Ասատրյանի համար մի շարք կարևոր հանդիպումներ էր կազմակերպել արտաքին դրամահատման գրասենյակի, ինչպես նաև Թոմաս դելա Դյու արժեթղթային ընկերության ներկայացուցիչների հետ: Համաձայնություն կնքվեց բաց բողնելու Հայոց հիշատակի մեդալադրամներ: Նմանատիպ մի հանդիպում էլ տեղի ունեցավ Սոֆիի և որդի ընկերության հետ, որը մասնագիտացած է արտաքին հուշամեդալների և շքանշանների արտադրության մեջ:

Հունիսի 10-ին, Լոնդոնում, Հայաստանի դեսպան Արմեն Սարգսյանին և որդի, Ասատրյանին ընդունեց Անգլիայի բանկի կառավարիչ որդի, Էդդի Ջորջը: Զրույցի ընթացքում քննարկվեց հետագայում հայկական բանկի աշխատողների որակավորման հնարավորություններ ստեղծելու հարցը: Բագրատ Ասատրյանը հանդիպեց նաև Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի նախագահ Ժակ Դելառոզիերի հետ:

Շարժական հիվանդանոցներ՝ Հայաստանին

Լոնդոնից բաղած մի այլ տեղեկության համաձայն, դրականորեն է լուծվել Հայաստանի աղետյալ շրջաններին շարժական հիվանդանոցներ տրամադրելու հարցը: Չորս լենդրովեր տիպի հսկա բժշկական կայաններ են գնվել Լոնդոնում Հայաստանի դեսպանատան նախաձեռնությամբ, 135 հազար ֆունտ ստեռլինգ ավելացության շնորհիվ:

Լենդրովեր Տրաստը հիմնվել է 1954 թվին Գալուստ Գյուլբենկյանի կողմից: Չնայած նրա ներկա հոգաբարձուների մեծամասնությունը անգլիացիներ են, հասատության գլխավոր նպատակներից մեկը մնում է ինչքան հնարավոր է շատ օժանդակել հայկական բարեգործական նպատակների իրագործմանը: Գերարդյունավետ հարմարություններով հանդերձավորված շարժական հիվանդանոցների ձեռքբերումը նպաստել են «Օգնություն Հայաստանին» կազմակերպության ներկայացուցիչներ: Ռոտերդամից դրանք նավով տեղափոխվել են Սանկտ Պետերբուրգ, որտեղից էլ Վրաստանով հասցվել Հայաստան:

ՀԱՄԱՌՈՏ

Այսկովկասյան համադաշնությո՞ւն

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Գաղտնիք չէ, որ չնայած ընթացող պատերազմին ու կովկասյան տարածաշրջանում ընդհանուր առմամբ ստեղծված չափազանց անբարենպաստ պայմաններին, այսօր արդեն քննության նյութ է դառնում Կովկասի հետագա կառույցի հարցը, այդ առթիվ նույնիսկ սեմինարներ ու համաժողովներ են անցկացվում: Ոչ վերջին հերթին առաջ է քաշվում նաև Այսկովկասյան համադաշնության ստեղծման հարցը: «Հայկական միջավայր» հեռազրական կենտրոնի «Շեր կարծիքը Այսկովկասյան համադաշնության ստեղծման մասին՝ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կամավոր միավորումով» հարցին ադրիլ ամսին երևանցի 684 պարզվածները հետևյալ հատասխաններն են տվել (տոկոսներով).

1. կտրուկ բացասական՝ 36, բացասական՝ 19, անտարբեր՝ 9, դրական՝ 16, խիստ դրական՝ 8, դժվարանում եմ պատասխանել՝ 12:

Նորքի հրդեհը հաջողվեց մարել

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ՍՆԱՐՔ: Մոտ երկու ժամ մոլեգնեց երեկ երեկոյան Նորքի բարձունքի կանաչ լանջերին՝ հեռուստակենտրոնի մոտակայքում հանկարծակի բռնկված հրդեհը: Տագնապի ազդանշանով ոտքի հանված քաղաքացիական պաշտպանության, հրշեջ պահպանության սպորաբաժանումները, ինչպես նաև նրանց միացած «Սոֆտակ» փրկարարական ջոկատի անդամները, չնայած ուժեղ քամուն, կարողացան նախ «չեզոքացնել», իսկ առավոտ մարել հրդեհը: Ինչպես նախորդ անգամ, այնպես էլ այս հրդեհի պատճառները պարզվում են:

ԵՐԵՎԱՆ

Կջեռուցվի մոտ 40 տոկոսը

ԵՐԵՎԱՆ, 16 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Այս ձմռանը նախատեսվում է ջեռուցել մայրաքաղաքի բնակելի շենքերի մոտ 40 տոկոսը (2100 շենք), անցյալ տարվա 15 տոկոսի (568 շենք) փոխարեն: Այս մասին տեղեկացրել է Երևանգործկոմի շենքերի ու շինությունների շահագործման վարչության պետ Կ. Խաչատրյանը: Մայրաքաղաքը ձմռանը նախապատրաստելու և բնակֆոնդի պահպանման նպատակով կառավարության որոշմամբ հատկացվել է 255 մլն դրամ, որը հաղորդակցումը պետք է հայթայթի սեփական հնարավորություններով: Այնուհանդերձ սկսվել են մայրաքաղաքի ձմռանը նախապատրաստելու աշխատանքները: Կատարվում են ջրմուղ-կոյուղու, ջեռուցման համակարգերի, էլեկտրագծերի վերանորոգման, սառը ջրով փորձարկման աշխատանքները: Արդեն փորձարկվել են 200 բնակելի շենքերի ջեռուցման համակարգեր: Կնքվել է պայմանագիր երևանգործկոմի մեխանիկական գործարանի հետ էլեկտրավահանակների պահեստամասերի պատրաստման համար:

Գերմանացիները հոգում են իրենց գերեզմանները

ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Արժանահավատ աղբյուրներից տեղեկացանք, որ ՀՀ արտաքին գործերի նախարարությունը ստացել է Հայաստանում Գերմանիայի դեսպանատան առաջարկը՝ «Պատերազմի զոհերի գերեզմանների խնամքի մասին» միջկառավարական համաձայնագիր կնքելու վերաբերյալ: Միաժամանակ, գերմանական կողմը խնդրել է ստեղծել կառավարական հանձնաժողով, որը նախնական բանակցություններ կվարի և կնախապատրաստի նշված համաձայնագրի ստորագրումը: Գերմանական կողմը իր «Հայտագրին» կցել է Հայաստանում իրենց գերությունն անցկացրած և այստեղ մահացած Գերմանիայի քաղաքացիների թաղման վայրերի ցուցակները, ինչպես նաև պատերազմի ու բռնության զոհերի գերեզմանների պահպանման մասին 1965 թ. հուլիսի 1-ին ընդունված օրենքի տեքստը: Ելնելով այս փաստից՝ Հայաստանի կառավարությունը հանձնարարականներ է տվել բոլոր այն շրջանների գործադիր իշխանություններին, որտեղ կան գերմանական գերիների թաղման վայրեր, որպեսզի վերջիններիս կողմից ճշտվեն դրանց առկայությունը և այդ մասին ամփոփ տեղեկություն ներկայացնեն վերադաս կամակերպություններին:

Անկախվել է «Ազգի» վերահրատարակումը ԱՄՆ-ում

«Ազգի» տնօրինության և Լոս Անջելեսում թերթի վերահրատարակչի միջև ծագած անհասկացողության հետևանքով վերջինս հունիսի 15-ից սկսած դադարեցրել է մեր թերթի վերահրատարակումն այնտեղ, որի համար Մ. Նահանգների մեր ընթերցողների ներողամտությունն ենք խնդրում: Ներկայումս աշխատանքներ են տարվում «Ազգի» վերահրատարակությունը՝ վերսկսելու ուղղությամբ: Արդյունքների մասին կհաղորդվի լրացուցիչ:

ՈԱՍԿՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության Դ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«Ազգ» թերթի հիմնադիր խորհուրդ
Երեւան 375010, Հանրապետության 47
Թող 562941, AT&T (7-8852) 151065
Գլխավոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՐԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՀԱՍԼԵՏ ԳԱՍՊԱՐԵԱՆ / 529221
Տնօրեն
ՍԱՐԳԻՍ ՍԱՐԳՍԵԱՆ / 562863
A STYLE համակարգչային ծառայություն / 581841
Ոճը եւ տառաձեւերը ՊԱՌԵԼ ԴԱԼԼԱԲԵՍԻՆ
Apple Macintosh
համակարգչային տառաձեւը «Ազգ» թերթի
Azg armenian daily
LIBERAL DEMOCRATIC NEWSPAPER
Editor
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 375010
E-MAIL INTERNET: ROOT.
YEREVAN @ REX. IASNET. COM

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

ՏԻՋԱՆ ԱՊՀ

ՈՐՈՒՍԱԿԱՆ ՍԱՄՈՒՐ

Ղարաբաղին ժողովրդագրական կործանում չի սպասում

Որոշ փորձագետների գնահատումներ, թե հինգ տարուց ավել տևող պատերազմից հետո Լեռնային Ղարաբաղը կհայտնվի ազգային կործանման առջև, չափից ավելի հոռետեսական են: Ղարաբաղցիները լի են վճռականությամբ, փոխարիվ ժողովրդի համար այդքան լուրջ կորուստներին պատասխանելու «համապատասխան միջոցառումներով», որոնք թույլ կտան վերադարձել և պահպանել գենոֆոնդը:

Ստեփանակերտի զազսի տվյալներով, մայիսի վերջին ծնելիությունը թեղեռ և շարունակում է հետ մնալ մահացությունից, այնուամենայնիվ, ասիճանաբար հասնում է վերջինին: Զազսի տեսուչ Էլմիրա Գրիգորյանի տվյալներով հունվարի մեկից գրանցվել է 404 մահ, որից 90 տոկոսը՝ ռազմաճակատում, և 320 նորածիններ: Երբ մինչպատերազմյան տարիներին Ղարաբաղում տղամարդիկ, որոնց կանոն, ամուսնանում էին 24–25 տարեկանից հետո, արդ այժմ ամուսնությունները կտրականապես «երիտասարդացել» են. ամուսնանում են 18 և նույնիսկ 17 տարեկանում, որոնցի ռազմաճակատ մեկնելիս բիկոնֆում մնա ժառանգը: «Ղարաբաղցիները այժմ հասկացել են, որ 1–2 երեխայով փոքր ընտանիք կազմելը սխալ է. մեկնաբանում է ԼՂՀ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Բորիս Առուբանյանը: Անհրաժեշտ է, որ յուրաքանչյուր ընտանիքում լինի առնվազն 4–5 երեխա: Հանրապետության ղեկավարությունը աշխատում է անձնական օրինակ ցույց տալ: Կրտսեր աղջիկս երեք ամսական է. Գերագույն խորհրդի նախագահի տանը երեխա է ծնվել երկուսուկես ամիս առաջ: Մենք հասկանում ենք, որ այդ երեխաների կյանքը դյուրին չի լինի. 2 տարեկան փոքրիկները ծնվել և մեծացել են նկուղներում՝ ռումբերի և կրակոցների տակ: Ղարաբաղցիների նոր սերնդին մենք ոչիչ կյանք տանք»:

ԼՂՀ-ի ղեկավարության՝ ծնելիության նկատմամբ հովանավորչական քաղաքականությունը, ինչպես նշեց ասվ. Առուբանյանը, ոչնչ է ընթանա երկու հիմնական ուղղություններով. արգելող և խրախուսող: Առաջինը նախատեսում է մոտ աղագայում արորտների արգելում ԼՂՀ-ում: Ըստ օրենքի, որի նախագիծը քննարկվում և հաստակվում է, ըստ երեսույթին, մինչև 45 տարեկան կանանց արորտ կատարելը կարգելվի, եթե չլինեն բժշկական ցուցումներ: Ինչ վերաբերում է բազմազավակության խրախուսմանը, ապա կառավարությունը ստեղծում է արտոնյալ պայմաններ, երեք և ավելի երեխաներ ունեցող ընտանիքներին տրամադրելով մարդասիրական զգալի օգնություն:

Կերակրողից զրկված երեխաների սոցիալական պաշտպանության աննախադեպ ձևերից է ԼՂՀ-ում պաշտոնապես օրինականացված «Հեսմահու ամուսնությունների» ինստիտուտը: ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի հատուկ հրամանագրով սահմանվում է, որ այն դեպքում, երբ ռազմաճակատ մեկնելուց առաջ Ղարաբաղի բանակի մարտիկը չի հասցրել պաշտոնապես գրանցել ամուսնությունը, ապա, զոհվելու դեպքում, նրա այրին դատարանի վճռով կարող է լրիվ օրինական ճանաչվել, և բնականաբար, երեխաների հետ ստանալ հասանելիք կենսաթոշակ: Ստեփանակերտի զազսի տվյալներով, տարվա սկզբին գրանցված 173 ամուսնությունից յուրաքանչյուր տասներորդը «հեսմահու» էր:

Գնդակոծման և օդային հարձակումների ժամանակ երեխաների և դեռահասների զանգվածային մահից խուսափելու համար միջոցառումներ են ձեռնարկվում: Հատկապես ադրբեջանական ռազմաօդային ուժերի կործանիչների ադրիլյան ռմբակոծումների պատճառով Ստեփանակերտի դպրոցները՝ մոտ մեկ ամիս չեն աշխատել: «Մենք երեխաներով այնքան հարուստ չենք, որ վտանգենք նրանց», բացատրում են դարաբաղցիները: Ղարաբաղյան պատերազմի բանակի մարտական գործողություններից մարտնչող անչափահասներին հետ կանչելու փորձեր են արվում: Երբ տակավին մեկ տարի առաջ բանակի շարքում հոդարտությամբ հիշատակում էին Մարտակերտի շրջանում մարտնչող գումարտակի մասին, որը կազմված էր բացառապես 15–16 տարեկան կամավորներից, ապա այսօր բանակի Խաղաղության ոչնչ Մուրադ Պետրոսյանը հավաստում է, որ 18 տարեկանից փոքրերին խստորեն արգելվում է ծառայության վերցնել և որ շարքի կողմից ֆիզիկական բաժնին ցուցում է տրվում մարտական ստորաբաժանումների ցուցակներից հանել բոլոր անչափահասներին:

Այսօր Լեռնային Ղարաբաղի բնակիչների ստույգ թիվը հայտնի չէ, որպես կանոն բերվում է մոտավոր թիվ՝ մոտ 150 հազար մարդ: Պաշտոնապես չի հաղորդվում նաև կորուստների ընդհանուր թիվը, որ ԼՂՀ

կերտի զազսի տվյալներով, տարվա սկզբին գրանցված 173 ամուսնությունից յուրաքանչյուր տասներորդը «հեսմահու» էր:

Գնդակոծման և օդային հարձակումների ժամանակ երեխաների և դեռահասների զանգվածային մահից խուսափելու համար միջոցառումներ են ձեռնարկվում: Հատկապես ադրբեջանական ռազմաօդային ուժերի կործանիչների ադրիլյան ռմբակոծումների պատճառով Ստեփանակերտի դպրոցները՝ մոտ մեկ ամիս չեն աշխատել: «Մենք երեխաներով այնքան հարուստ չենք, որ վտանգենք նրանց», բացատրում են դարաբաղցիները: Ղարաբաղյան պատերազմի բանակի մարտական գործողություններից մարտնչող անչափահասներին հետ կանչելու փորձեր են արվում: Երբ տակավին մեկ տարի առաջ բանակի շարքում հոդարտությամբ հիշատակում էին Մարտակերտի շրջանում մարտնչող գումարտակի մասին, որը կազմված էր բացառապես 15–16 տարեկան կամավորներից, ապա այսօր բանակի Խաղաղության ոչնչ Մուրադ Պետրոսյանը հավաստում է, որ 18 տարեկանից փոքրերին խստորեն արգելվում է ծառայության վերցնել և որ շարքի կողմից ֆիզիկական բաժնին ցուցում է տրվում մարտ-

«Սեգոդնյա», 3 հունիս

ՋԵՍԻԿԱ
ֆիրմա

Հրավիրում ենք կուրսի

Իրանի պատմական քաղաքներով՝ Խոյ, Ուրմիյե (Սալմաս), Թավրիզ՝ 7 օրով, մասչելի գներով:

Ցանկացողները դիմեն «Ջեսիկա» ֆիրմային հեռեյալ հասցեով՝ Երևան, «Երեբունի» հյուրանոց, 2-րդ մասնաշենք, 1-ին հարկ, 1-ին սենյակ: Հեռ. 56-40-71

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՕԴԱՅԻՆ ՈՒՂԻՆԵՐ

Շաբաթական կանոնավոր թռիչքներ

Աթենք երեքշաբթի
Բեյրութ երեքշաբթի
Փարիզ հինգշաբթի
Թեհրան կիրակի

լրացուցիչ տեղեկությունների համար դիմեք ՀԱ գրասենյակներ 53-05-82

Հարաստանի Ամերիկյան Համալսարան

Հատուկ դասընթացների բաժին

Ամերիկյան արտաքին քաղաքականությունը հետխորհրդային աշխարհում

դասախոս՝ պրոֆեսոր Հրաչ Զաղոյան
հունիսի 22, 1994, ժ. 16:00, Հայաստանի Ամերիկյան Համալսարանի փոքր դահլիճում (հինգերորդ հարկ) Երևան, Մարշալ Բաղրամյան 40

Դասախոսի մասին. Պրոֆեսոր Հրաչ Զաղոյանը Նյու Յորքի համալսարանի Քոլինգ քոլեջի պրոֆեսորն է և վերջին քսան տարիների ընթացքում դասավանդել է նույն քոլեջի քաղաքական գիտությունների բաժանմունքում: Նախկինում նա եղել է սույն քոլեջի դեկանը և այլ ծրագրերից զատ զբաղվել է նաև էրգիկական և տարածքային խնդիրների ուսումնասիրման ծրագրով: Պրոֆ. Հրաչ Զաղոյանը ծնվել է Ռումինիայում և վերաբնակություն հաստատել Ամերիկայի Միացյալ Նահանգներում:

Միացյալ Նահանգների բանակում ծառայությունն ավարտելուց հետո նա սովորել է Քոլինգ քոլեջի քաղաքագիտության բաժնում և այնուհետև շարունակել ուսումը Կոլումբիայի համալսարանի միջազգային քաղաքականության բաժնի ասպիրանտուրայում, որտեղ և կատարել է գիտական հետազոտություններ: Նա մասնագիտացել է այնպիսի հարցերում, ինչպիսիք են խորհրդա-ամերիկյան հարաբերությունները, ամերիկյան արտաքին քաղաքականությունը և միջազգային հարաբերությունները:

Նա բազմաթիվ դասախոսություններ է կարդացել նախկին Խորհրդային Միության, Արևմտյան Եվրոպայի և հետխորհրդային շրջանում ԱՄՆ-ի արտաքին քաղաքականության, ինչպես նաև Հայաստանի և հայկական տիրույթի հետ առնչվող թեմաներով: Պրոֆ. Զաղոյանը ամերիկահայ համայնքի ակտիվ անդամներից է և ներկայումս Ամերիկայի Հարեկյան թեմի ազգային առաջնորդարանի գործադիր խորհրդի անդամ: 1993 թ. աշունը Նյու Յորքում կայացած, Կիլիկիայի բազավորությունը նվիրված միջազգային կազմակերպության նախագահն էր: Նա մասնակցել է բազմաթիվ կոնֆերանսների, գիտաժողովների և ծավալել է ակտիվ գործունեություն կրթության բնագավառում:

Դասախոսությունը կընթանա անգլերեն լեզվով հայերեն համընթաց թարգմանությամբ:
Լրացուցիչ տեղեկություններ համար զանգահարեք 27-33-70 կամ 27-16-58 հեռախոսահամարներով:

ՀԱՄԱՌՈՏ

Ռուսաստանը կընդունի մինչև չորս միլիոն գաղթական

ՄՈՍԿՎԱ, 17 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՌ-ՏԱՍՍ: ԽՍՀՄ-ի տրոհման հետևանքով Ռուսաստանի Դաշնության սահմաններից դուրս հայտնվեցին 25 միլիոնից ավելի ռուսներ, և այսօր մեծավոր աշխարհի երկրներում նրանց կյանքը դյուրին չի դասավորվում: Մարդիկ, հիանալի հասկանալով, թե ինչ բարդություններ ու խնդիրներ են իրենց սպասում Ռուսաստանում, այդուհանդերձ, ձգտում են վերադառնալ պատմական հայրենիք: Արդեն այժմ Ռուսաստանում են գտնվում երկու միլիոնից ավել գաղթականներ, հարկադիր վերաբնակներ ու տնտեսական «տարագիրներ» նախկին միութենական հանրապետություններից: Ռուսաստանի Դաշնության տարաբնակության համաղեկական ծառայության մասնագետների փորձագիտական գնահատմամբ արդեն առաջիկա երկու-երեք տարում Ռուսաստան կգա շարք 400 հազար մարդ Անդրկովկասի շրջաններից, մինչև 3 միլիոն Միջին Ասիայից և մոտ 500 հազար՝ բալթյան պետություններից:

Սակայն պետությունն ի վիճակի չէ ներգաղթողներին աղահովելու ամեն ինչով: Դրա համար պարզապես միջոցներ չեն բավականացնում: Եթե Ռուսաստանի գաղթի ծրագրով տարեկան հատկացված է 691 միլիարդ ռուբլի, ապա առ այսօր ստացված է այդ գումարի ընդամենը 16 տոկոսը:

Տնտեսեցին 61 միլիոն դոլլար

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մենատի հատկացումների կոմիտեն արտահայտվեց Ռուսաստանին և մյուս նախկին խորհրդային հանրապետություններին 1996 ֆինանսական տարում ցույց տվելիք ամերիկյան օգնության չափերը 61 միլիոն դոլլարով կրճատելու օգտին: Բլինթոնի վարչակազմը այդ նպատակների համար պահանջել էր 900 միլիոն դոլլար: Բայց քննարկումից հետո այդ գումարը կրճատված է մինչև 839 միլիոն դոլլար: Ռուսաստանին և մյուս նախկին խորհրդային հանրապետություններին օգնություն տրամադրելը խիստ կարևոր է ԱՄՆ-ի շահերի համար, օրինագծի քննարկման ընթացքում նշեց Պատրիկ Լիհին (դեմոկրատ Վերմոնտի նահանգից), բայց մենք աղարդյուն փորձեր էինք անում պարզելու, թե վերջապես որն է վարչակազմի ռազմավարությունը նախկին խորհրդային հանրապետություններից յուրաքանչյուրի նկատմամբ:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Ազգայինը

ՍՓՅՈՒՌՔ-ՀԱՅՐԵՆԻՔ

Ալեք Մանուկյանի նոր նվիրատվության առթիվ

Ինչպես հաղորդել էինք մեր նախանցյալ համարում, անզուգական բարերար Ալեք Մանուկյանը հանձն է առել հոգալու ծախսերը Երևանում կառուցվելիք Մայր տաճարի: Այդ առթիվ մեր դաշտոնակից ՌՍՍ Մ. Նահանգների դաշտոնաթերթ «Նոր Օր»-ի խմբագիր Հակոբ Պողոսյանը, որ ներկա է գտնվել Դեհրայոտում ի դաշիվ բարերարի տեղի ունեցած հանդիսություններին, հետևյալ գրությունն է առաքել մեզ: Միևնույն առիթով հրատարակում ենք նաև ազգային բարերարի նամակը՝ ուղղված Ամենայն հայոց հայրապետ Վազգեն Ա-ին: Այդ նամակից դարձվում է, որ տիար Ա. Մանուկյանը դաշտասվում էր այդ նվիրատվության մասին անձամբ հաղորդել Վեհափառին, երբ վերջինս նույնպես ներկա կգտնվեր դեհրայոտի հանդիսություններին:

Իր կնանի նշանակալից իրամանչիր հանգրանանին, 20-դ դարու հայ իրականութեան ամենէն մեծ բարերարը տիար Ալեք Մանուկեան, նոյնիսկ նշանակալից նուիրատուութեամբ մը ազգին կտակած է մշակութային կեդրոն մը, դպրոց մը, եկեղեցի մը, մարզական համալիր մը, բանգարան մը, թէ Սփիւռքի եւ թէ հայրենիքի մէջ, նոյնասկով մեր գոյութեան կռուաններու ամրակոնքն: Տարիներու բաղդին հետ, այդ նուիրատուութիւններու ընդհանուր գումարը կազմած է շուրջ 80 միլիոն դոլար: Սակայն, բնաւ դասահած չէ, որ ազգային բարերարը յայտարարած ըլլայ նուիրատուութիւն մը, որուն տարողութիւնը ոչ կարելի է սահմանել նիւթական եւ ոչ ալ բարոյական իմաստներով: Այժմ, հայոց հրիստոնէութեան դարձին 1700-ամեակին առիթով, Երեւանի սիրտին մէջ կառուցուելիք Մայր տաճարի շինութեան ծախսերը իր վրայ կը վերցնէր մեծ բարերարը:

Ազգային բարերարը, Տիրոյրի մէջ Կիրակի 12 Յունիսին իրեն ի դաշիս կազմակերդուած ճաշկերոյթ-հանդիսութեան յուզումնախառն շեշտով մը կը յայտարարէր, թէ «Հայոց Եկեղեցին հայ ազգին տունն է եւ առանց եկեղեցիին ոչ լեզուին, չկայ հայութիւն: Եկեղեցին մեր դիմադրականութեան ամրոցն է»:

Բարերարը, ժողովուրդի յոտնկայս ծափահարութիւններուն տակ կ'ավելցնէր. «Տաճարի շինութեան բարերարութիւնը մեծ դաշիս մը է ինծի: Ես շնորհակալ եմ իմ ժողովուրդէս, որ օգնած եւ հաջակերած է զիս: Ես շատ երջանիկ եմ եւ դիտի շարունակեմ իմ գործս ծառայելով ազգիս»:

Եւ իրոք, հանի մը տարի ետք, երբ դիտի բեւեռնիսնք 2000 թուականը, իսկ ազգային բարերարը մօտենայ 100 տարեկանի սեմին, ազգին եւ հայրենիքին կատարած նուիրատուութիւններու ընդհանուր գումարը գերազանցած դիտի ըլլայ 100 միլիոնը: Արտերկրի եւ հայրենիքի հայութեան համար դարմանական դիտի ըլլայ այդ գումարը, որովհետեւ յետնորդ սերունդներու կեանքին մէջ տասնաոյսկոսած եւ հարիւրադարձած դիտի ըլլայ անոր արժէքը եւ Ալեք Մանուկեանի անունով հիմնարկուած կառոյցները դիտի հանդիսանան ազգային, մշակութային եւ հոգեկան մեր հարստութիւնները:

Իր այս մեծագոյնս բարերարութեամբ Ալեք Մանուկեան անգամ մը եւս հաստատեց, թէ ինչ կը շարունակէ զօրացնել մեր ազգային իմունութեան խարիսխները եւ որուն համար շնորհաւորանք դիտի մնան ոչ միայն ներկայ, այլեւ առաջիկայ սերունդները:

Յունիս 8, 1994

Ն. Ս. Օ. Տ. Տ. Վազգէն Ա.
Կաթողիկոս Ամենայն Հայոց
Ս. Էջմիածին, Հայաստան
Վեհափառ Տէր,

Մեզի համար ճշմարիտ հրճուանք դիտի ըլլար Ձեր անձնական հովանին եւ օրհնութիւնը վայելել մեր եկեղեցւոյ նուիրուած ծառայութեան 80-ամեակին հանդիսութեան ընթացքին, սակայն, երախտագիտական մեր զգացումները ոչ մէկ չափով կը գեղչուին, քանի արդէն ստացուած է Ձեր արքատաս կոնդակը եւ մանաւանդ քանի Դուք ճամբայ իսկ ելած Տիրոյր հասնելու ցանկութեամբ, սակայն Ձեր առողջութիւնը չթոյլատրեց Փարիզէն անդին ոտքդնելու:

Մեր անկեղծ ցանկութիւնն էր հանդիսութեան ընթացքին յայտնել, թէ ընդառաջելով Ձեր առաջարկին յանձն կ'առնէիք բարերարութիւնը Երեւանի արտին վրայ բարձրանալիք Մեր Մայր տաճարին, որուն կառուցումը դիտի փառաւորէ հանդիսութիւնները հայոց հիսունէակեան դարձին 1700-ամեակին: Սոյն տաճարդ դիտի հանդիսանայ խորհրդանիշը հայոց հաւատքի անխորտակելիութեան նոյնիսկ եօթանասուն տարուան անհաւատութեան դարէ մը ետք:

Կ'ուզենք մանաւանդ շեշտել, թէ սոյն տաճարի շինութեան բարերարութիւնը կը սանձաններ մասնաւորաբար իրեն գնահատանքի արտայայտութիւն Ձեր չորս տասնամեակներու իմաստուն ու շինարար հոգեւոր առաջնորդութեան, Ս. Գրիգոր Լուսաւորիչի դաշտական գահուն վրայ:

Մաչելով ի համբոյր Ս. Աջոյդ կը մնանք
Որդիական ակնածանօք
Ա. ՍԱՆՈՒԿԵԱՆ

Վեհափառը շնորհակալություն է հայտնում Քյուրճյաններին

Երկուշաբթի օրը, հունիսի 14-ին, Ս. Էջմիածնի Մայր Աթոռի դիվանը ծի հաղորդագրություն է տարածել, ուր ասվում է, թե՝ «Վեհափառ Հայրապետը իր ջերմագին շնորհակալությունն է հայտնում Մայր Աթոռիս բարերարներ Տիարէ Նորճ եւ Նոնի Քյուրճյաններին, այն բացառիկ հոգատար վերաբերմունքի համար, որ վայելեց Նորին Սրբությունը նրանց կողմից Փարիզի Hotel Dieu հիվանդանոցում գտնված ժամանակ Պրոֆ. Բերնադուի տեւական հսկողության ներքո: Վեհափառ Հայրապետն իր մասնավոր գնահատանքն է հայտնում Տիար Նորճ Քյուրճյանին եւ Տիկին Դայանա Քյուրճյանին տեւաղես նրանց որդիական հույժ հոգատար վերաբերմունքի համար:

«Ամենայն Հայոց Կաթողիկոսը, կարդում ենք հաղորդագրության մեջ, իր ջերմ գոհունակությունն է հայտնում Փարիզի Հայոց Եկեղեցական Վարչության եւ հատկապես Փարիզի Առաջնորդ եւ Ֆրանսիայի Հայրապետական Պատվիրակ Գերաշնորհ Տ. Գյուս Արքեպիսկոպոս Նազարյանի բացառիկ ուշադիր վերաբերմունքի համար հիվանդանոցում նրա գտնվելու օրերին՝ 24 Մայիսից մինչեւ 8 Հունիս»:

ՍՓՅՈՒՌՔ

Գերմանահայ համայնքը օգնում է Հայաստանին

Սփյուռքը, որը ծնունդ է ցավի եւ ողբերգության, հարազատորեն եւ նվիրումով է արձագանքում ներկայիս Հայաստանի բոլոր դժվարություններին: Հայ ժողովրդի հեռու առավել դյուրազգաց են նրա նկատմամբ, առավելագույն տագնապով են ապրում Հայաստան աշխարհի հոգսերով, յուրաքանչյուր օրը ծգտում գործով եւ իմացությամբ նպաստել նորաստեղծ հանրապետության կայացմանը, եւ այդ ներշնչումով իմաստավորում ապրածը: Շատերը տարբեր կուսակցությունների են պատկանում, ունեն քաղաքական տարբեր հայացքներ, եւ միայն հայրենիքի օգտակարության գաղափարն է, որ հաճախ միասնացնում է նրանց ուժերը: Այդպիսին է նաեւ քանակապես փոքր եւ ցավալիորեն տարեցտարի համալրվող գերմանահայ համայնքը, որը ձեւավորվել է գլխավորապես վերջին տարիներին Պարսկաստանից եւ Թուրքիայից այնտեղ վերաբնակված հայերով: Շնորհիվ այդ համայնքի է (նախագահ՝ Անդրանիկ Ազնաուր), որ Հայաստանի Հանրապետությունը, որպես անկախ եւ ինքնուրույն միավոր, մասնակցում է Ֆրանկֆուրտի գրքի միջազգային ամենամյա տոնավաճառին համայնքի հանգանակած միջոցներով գբաղեցնում առանձին ցուցասրահ, կազմակերպում պատվիրակության ընթացիկ բոլոր ծախսերը: Ու թեեւ նման միջոցառումները միջազգային կաղերի եւ պայմանագրերի կնքման առումով դեռեւս կրում են «հեռախուզական», փորձի եւ ճանաչողության ձեւաբերման մակարդակ, այնուամենայնիվ, աշխարհի խոշոր հրատարակիչներին են ներկայացնում հայոց մշակույթի, գիտության եւ գրականության գոհարները, սաղմնավորում գրահրատարակչական փոխճանաչողության եւ համագործակցության վայրվա հասկերը: Այդպես «Նարի» հրատարակչությունում ծնունդ առավ գերմանացի հեղինակ է. Հիլզենրաթի «Վերջին մտի հեմիաթը» վեպի հայերեն բարգմանությունը: Այդպես առաջիկայում կյանի կկոչվեն հրատարակչական բազմաթիվ նորույթներ:

Վերջին տարիների գերմանահայ համայնքի կյանքում իրադարձություն էր գերմանացի հայ բժիշկների միության կազմավորումն ու եռանդուն գործունեությունը Հայաստանում: Առողջապահական դիտույթների եւ դեղորայքի առաքումը Հայաստան ուղեկցվեց նաեւ դեղորայքի սեփական արտադրության, բուժսարքավորումների ձեւաբերման միտումով: Գերմանահայ բժիշկների պատվիրակության վերջին այցը Հայաստան կրում էր ոչ միայն գործնական, այլեւ ներկայացուցչական բնույթ: Պատվիրակության կազմում էին նախագահ Բաֆֆի Պարոնյանը, փոխնախագահ Խաչիկ Թաքարյանը, վարչության խոսնակ Շավարշ Հովասափյանը, բժիշկներ Սարգիս Յափշին, Ադամ Սարգիսը, դեղագործ Հայր Խորովյանը եւ վաճառական բարերար Գեորգ Թովմասյանը: Վերջինս իր անձնական խնայողություններից 9000 դոլար նվիրաբերեց Արցախում գոհված ազատամարտիկների ընտանիքներին՝ գումարը հանձնելով «Սահ իմացյալ՝ անմահություն» գրի հեղինակ Անդրանիկ Արշակյանին, որպես այդ ընտանիքներին եւ անձանց խաչատեղյակ մի անձնավորության, որի վերոհիշյալ գիրքհանրագիտարանը ներկայացնում է 80 թվականից սկիզբ առած գոյամարտում գոհված հաջերի կենսագրականները:

Գերմանիայի հայ բժիշկների խումբն այցելեց հանրապետության եւ մայրաքաղաքի մի շարք հիվանդանոցներ, Արարատի հիվանդանոց, Արտաշատի ատամնաբուժարան, Երեւանի արյան փոխներարկման մանկական կենտրոն եւ այլն), որտեղ բաժանվեց Գերմանիայից բերած շուրջ 100 հազար մարկ արժողության դեղորայք բուժսարքավորումներ, ատամնաբուժական պիտույքներ եւ սնունդ: Պատվիրակությանը հետ տարբերում էր նաեւ նախորդ անգամներից դեղորայքի իրացման խնդիրը: Հիշարժան էր բժիշկներից մի քանիսի անձնական նախաձեռնությունը՝ լինել Ղարաբաղում, տեսնել այնտեղի հիվանդանոցների վիճակը, հետեւել բուժպատարկման գործընթացին: Երկօրյա այցելությունը Ղարաբաղ նշանավորվեց ԼՂՀ առողջապահության նպատակի հետ հանդիպումով, որին հանձնվեցին գերմանահայերի բերած դեղորայքն ու առաջին անհրաժեշտության որոշ իրեր: Հատկանշական է այն փաստը, որ գերմանահայ բժիշկների միության նախագահ Բաֆֆի Պարոնյանի մայրը ծնվել է Շուշիում, եւ Բաֆֆին Ղազանչեցոց եկեղեցու բակից մի բուռ հող վերցրեց տանելու ծննդավայրից հազարավոր կիլոմետրեր հեռու բաղված մոր շիրմին...

Պատվիրակությունը մեկնեց հայրենիից հաջորդ գալուստյան առավել գործնական եւ կայուն գործունեության նորանոր ծրագրեր եւ մտահղացումներ փայփայելով, վստահ, որ երկրաշարժի եւ տեւական պատերազմի հետեւանքներն ամոքելու իր առաքելությունն օրհնված է ի վերուստ, վստահ, որ իրենց յուրաքանչյուրի հոգում ամեն օր, ամեն վայրկյան բաց վերքի նման մխալու են հայրենի վերքերն ու տիները, եւ մղելու նորանոր ձեռնարկումներ սերս ու անբաժան լինելու հայրենիքից:

ԴԱՎԻԹ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆԵՐՔԻՆ ԿՅԱՆՔ

Դավիթ Վարդանյան. «Ղարաբաղի հակամարտության լուծման մեջ երրորդ կողմը պետք է բացառվի»

ՌՈՒԶԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ՀՀ ԳԽ արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Դավիթ Վարդանյանը մի քանի շաբաթ առաջ, ԵՊՀ ազատագրական ակադեմիայի եւ ԱԺՄ ազատագրական ակումբի անդամների հետ հանդիպման ժամանակ, դասախոսելով ներկաների հարցերին, դեռ էր արտահայտվել դարաբաղյան հակամարտության գոտում ռուսական խաղաղարար ուժեր տեղադրելուն:

«Ի վերջո, Ղարաբաղի դաշտերազմը մեզ համար դեռեւս հարցական է այն իմաստով, որ գրավվել են մի շարք տարածքներ իրարկե, տեղի հայ բնակչության համար զուտ անվտանգության գոտիներ ստեղծելու նպատակով, չէ՞ որ Ղարաբաղը բիկուսիք չուներ», ասաց նա, իր ոչ ի դաշտոնե տեսակետը մեկնաբանելիս: Դավիթ Վարդանյանը բերահավաս է մոտենում կրակի դադարեցման բիբերկյան համաձայնագրով նախատեսվող փուլերին, որս որոնց նախ տեղակայվում են խաղաղարար ուժերը, ապա Ադրբեջանին են վերադարձվում գրավված տարածքներն, ու աղաբերգավակվում է Հայաստանը, հետո նոր դրվում է Արցախի կարգավիճակի որոշման հարցը: Նա անհավասարազոր համարեց հարածքների վերադարձ եւ աղաբերգավակումը, բեկուզ միայն դրանց համար դահանջվելիք ժամանակի ու աշխատասարության առումով:

«Ինչ վերաբերում է ռուսական խաղաղարար ուժերին, նախ ասեմ, թե գաղտնիք չէ, որ Ռուսաստանի նոպատակն է տարածաշրջանում իր ազդեցության ամրապնդումը, որը կարող է պոտենցիալ կամ տեսական, կամ ռազմական միջոցներով: Նրա համար նախընտրելի է ռազմական, որովհետեւ սահմանների, մասնավորապես Իրան-Ադրբեջան, վերահսկելիության հարց կա, մնացած բոլոր հարցերը սրան ածանցյալ են: Որպեսզի դրան հասնի, Ռուսաստանն Ադրբեջանին պետք է ուժով սնոտի, իսկ դրա միակ լծակը Ղարաբաղն է (Ադրբեջանի դեղում տնտեսական որեւէ լծակ չի գործի, որովհետեւ հաղորդակցության տեսակետից այն բարեկամաս դայմաններում է)»:

Դավիթ Վարդանյանի կարծիքով, խոսացվող խաղաղությունը ժամանակավոր բնույթ է կրելու, Ադրբեջանը չի հաշտվելու դաշտերազմական կորուստների հետ, ներկայիս կամ նոր իշխանություններ ժամանակ, եւ շահելու, այնուհետեւ հայտարարելու են դաշտերազմը շարունակելու իրենց դաշտասակամության մասին եւ մատնացույց են անելու ռուսական զինված ուժերը, որպես խանգարող հանգամանք: Իսկ Ռուսաստանը փորձելու է մեղմացնել Ադրբեջանի հակառուսական տրամադրությունը: Իսկ դա արդեն կլինի ի հաշիվ Ղարաբաղի, բեկուզ առողջակիորեն, «Նման օրինակներին արդեն ծանոթ ենք... Կհայտնվենք հոգեբանական եւ ֆիզիկական անտանելի իրադրության մեջ, եւ հարց է, թե արդյոք կկարողանա՞նք վերականգնել մեր մարտունակությունը: Իհարկե, Ադրբեջանը կարող է չգնալ նման կողմնորոշման եւ դիմադրությունից դուրս գալ սեփական անկախության եւ առեւտրության կողմնորոշման ընտրությամբ, սակայն Ռուսաստանի ճնշումն Ադրբեջանի վրա անընդհատ զգալի է լինելու», ասաց նա:

Դավիթ Վարդանյանը ավելի բարեհոգաս է համարում հակամարտության լուծման գործում որեւէ երրորդ ուժի բացառումը դաշտերազմում լինի թե բանակցությունների սեղանի շուրջ: «Այդ դեպքում հաղթանակի շանսեր կլինեն: Յանկացած խաղաղարար ուժ այստեղ առավելապես քաղաքական, քան խաղաղարար դեր է կատարելու... Իհարկե, դժվար է դաշտերազմը շարունակել, բայց սացվում է, որ էլը կերել ենք, դոչին խոնվում ենք: Եթե այստեղ աղբելու ենք, դեպք է առաջին հերթին հույսը դնենք մեր սեփական ուժերի վրա»:

Ինչ վերաբերում է անցյալ տարի ՀՀ եւ ՌԴ նախագահների ստորագրած «Հայաստանում ռուսական զորքերի կարգավիճակի մասին» դայմանագրին, որը գրեթե անմիջապես վավերացրեց Ռուսաստանի խորհրդարանը, Հայաստանի Գերագույն խորհուրդը շուրջ մեկուկես տարի հապաղում է այն հաստատել: Պրոֆ. Վարդանյանը բացատրեց, որ հարցի ծգձգումը ոչ թե քաղաքական, այլ զուտ տնտեսական նկատառումներ ունի: Պայմանագրի կետերից մեկը նախատեսում է, որ ռուսական բանակի Հայաստանում ունեցած անշարժ (այդ թվում եւ հողը) եւ շարժական գույքը պետք է դառնա ՌԴ սեփականությունը, այն դեպքում, երբ նախկին խորհրդային հանրապետություններ դաձան խորհրդային բանակի իրենց երկրում տեղակայված «ունեցվածքի» ստղակի ժառանգորդը: Այստ վիճելի կետն այն է, որ ռուսական զորքերի ֆինանսավորման մի մասն իր վրա է վերցնում Հայաստանը: Նա նշեց, որ միջազգային դրակտիկայում լրիվ հակառակն է. եթե մի դետություն մյուսի տարածքում ռազմական բազաներ է տեղակայում, ինքն է վճարում. «Անկախ նրանից, թե մեր հարաբերություններն ինչդիսին են (այդ՝ մենք դաշնակից դետություններ ենք, իսկ այս հարցում հակառուսական ոչինչ չկա), կամ Հայաստանի սեփականություն ռուսական բանակի վարձակալմամբ, կամ էլ եթե Ռուսաստանի սեփականություն, ապա դրա դիմաց համարժեք դրամական վճարում Հայաստանին», ասաց նա, ի դեպ, ավելացնելով, որ Ռուսաստանի տնտեսական հաղթակաությունը Հայաստանի եւ Ադրբեջանի հանդեպ լիովին նույնն է:

Պրոֆ. Վարդանյանը նշեց նաեւ, որ Հայաստանում Ռուսաստանի բազաների տեղակայման մասին խոսակցություններից հետո արդեն «Հայաստանում ռուսական զորքերի կարգավիճակի մասին» դայմանագրի, որի կետերը դիտի համաղաստասխանեցվեն միջազգային նորմերին ու դահանջներին: Այնուհետեւ դայմանագիրը դետք է մտնի ՀՀ խորհրդարան: Իսկ այն, որ նախագահ Տեր-Դետրոսյանը հարցն արդեն վճռված է համարում, նա հայտնեց, որ այն իրականում հեռու է այնքանով, որ Հայաստանի Գերագույն խորհուրդն այն դեռեւս չի վավերացրել:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Միջազգային

ԹՈՒՐՔԻԱ-ՀՈՒՆԱՍՏԱՆ

Հերթական առճակատում. Գերլարված ղահ

Թուրքիան Հունաստանում էլ է PKK փնտրում

ՄՈՒՐԱԴ ԲՈՅՈՒՆՈՒ

Թուրք-հունական հարաբերություններում մշտապես առկա լարվածությունը վերջին շաբաթներում կրկին հասավ գագաթնակետին: Կողմերը (հատկապես Թուրքիան) մղանալիներ եւ վիրավորանքներ են տեղում իրար հասցեի, մեղադրում միմյանց միջազգային իրավունքի եւ «բարիդրացիական հարաբերությունների» նորմերի խախտման մեջ: Ակնհայտ է, որ թուրք-հունական հակամարտությունը, եթե մի կողմ դնենք ղպտական գործոնը, պայմանավորված է երեք հիմնահարցով. Կիպրոսի խնդիրը, Էգեյան ծովի առափնյա շերտի շուրջ վիճաբանությունը եւ Հունաստանի կողմից PKK-ին ցույց տվող աջակցությունը: Եթե առաջին երկու գործոնը, իրոք, արտահայտում են այս երկրների դիմակայության օբյեկտիվ վիճակը, ապա վերջինը արհեստական բնույթ ունի եւ Անկարայի կողմից պարբերաբար օգտագործվում է այս կամ այն հարեւանի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով: Ընդ որում, միշտ օրակարգի հարց է դառնում այն պահերին, երբ Թուրքիան փորձում է խուսափել Կիպրոսի հարցի արդարացի լուծումից, ինչպես նաեւ Էգեյան ծովում ծովագնացության միջազգային կանոնների կիրառումից: Այդպես եղավ նաեւ այս անգամ: Կիպրոսի հարցի կարգավորմանն ուղղված Վիեննայի բանակցությունների արդյունքում մշակված փաստաթուղթը չէր համաձայնեցվում Դենքթաշի վարչակարգի անջատողական նկրտումներին, թեեւ իրական հիմք էր ստեղծում բազմաշերտ կոնֆլիկտի լուծման սկիզբը դնելու համար: Անկարան ձեւականորեն արտահայտվեց ՄԱԿ-ի վերջին նախաձեռնության դեմ եւ փորձեց «համոզել» Կիպրոսի թուրքերի ղեկավարին ընդունել Վիեննայի պայմանները: Հակառակ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Ղալիի թուրքական կողմին խիստ քննադատող զեկուցագրից հետո Անկարան հայտնվեց անել վիճակի մեջ: Անհրաժեշտ էր համաշխարհային հանրության ուշադրությունը շեղել Կիպրոսի հիմնահարցից: Ահա հենց այս պահին էլ լույս աշխարհ հանվեց Թուրքիայում «ահաբեկչական» գործողություններ իրականացնող PKK-ի անդամների Հունաստանում նախաղահ դարձած լինելու վարկածը, եւ թուրքական լրատվական միջոցները զանգվածային հարձակման անցան Աթենքի դեմ: Կրակին յուղ լցրեց նաեւ ներքին գործերի նախարար Նահիթ Մենքեշեն իր հայտարարություններով, թե իբր նրա ձեռքում կան անվիճելի փաստեր Աթենքի եւ PKK-ի կապերի մասին: Ինչ-որ տեղ Կիպրոսից շեղվելու հարցում թուրքերին օգնեց նաեւ Հունաստանի պահանջը ծովային սահմանները միջազգային դրակտիկայում ընդունված 12 մղոնի հասցնելու վերաբերյալ: Հանուն արդարության պետք է ընդունել, որ Հունաստանի պահանջն ավելի քան արդարացի է, քանի որ Թուրքիայի քմահաճույքով նա զրկված է իր առափնյա ջրերում տիրություն անելու եւ նավթահեւանոցման աշխատանքներ կատարելու հնարավորությունից: Անկարան առ այսօր հրաժարվում է ստորագրել համաաստխան միջազգային կոնվենցիան, պատճառաբանելով, թե Էգեյան ծովի հունական կղզիներն այնքան մոտ են Թուրքիային, որ 12 մղոնի կիրառման դեպքում ինքն ընդհանրապես կզրկվի առափնյա շերտից (կարծես թե նույն օրենքը չի տարածվում Հունաստանի վրա): Ամեն անգամ, երբ Հունաստանը հարուցում է այս հարցը, Անկարան մեծ աղմուկ է բարձրացնում եւ սպառնում նույնիսկ պատերազմական գործողություններով: Այս անգամ եւս նա դիմեց իր դիվանագիտական զինանոցի փորձված մեթոդներին: Թուրքական բանակի գլխավոր շտաբում «պատասխան քայլեր» մշակվեցին: Դրանցից առաջինը թուրքական Գյոքչեադա կղզու օդանավակայանի բռնիչադաշտի երկարությունը մինչեւ 2040 մետրի հասցնելու որոշումն էր, ինչը թույլ կտա այստեղ ռազմական արդիական ինքնաթիռներ ընդունել: Մի նոր օդանավակայան է կառուցվելու Բոզջաադա կղզում:

Այս հարցի քննարկմանն էր նվիրված նաեւ թուրքական հարաբերությունների» նորմերի խախտման մեջ: Ակնհայտ է, որ թուրք-հունական հակամարտությունը, եթե մի կողմ դնենք ղպտական գործոնը, պայմանավորված է երեք հիմնահարցով. Կիպրոսի խնդիրը, Էգեյան ծովի առափնյա շերտի շուրջ վիճաբանությունը եւ Հունաստանի կողմից PKK-ին ցույց տվող աջակցությունը: Եթե առաջին երկու գործոնը, իրոք, արտահայտում են այս երկրների դիմակայության օբյեկտիվ վիճակը, ապա վերջինը արհեստական բնույթ ունի եւ Անկարայի կողմից պարբերաբար օգտագործվում է այս կամ այն հարեւանի նկատմամբ ճնշում գործադրելու նպատակով: Ընդ որում, միշտ օրակարգի հարց է դառնում այն պահերին, երբ Թուրքիան փորձում է խուսափել Կիպրոսի հարցի արդարացի լուծումից, ինչպես նաեւ Էգեյան ծովում ծովագնացության միջազգային կանոնների կիրառումից: Այդպես եղավ նաեւ այս անգամ: Կիպրոսի հարցի կարգավորմանն ուղղված Վիեննայի բանակցությունների արդյունքում մշակված փաստաթուղթը չէր համաաստխանում Դենքթաշի վարչակարգի անջատողական նկրտումներին, թեեւ իրական հիմք էր ստեղծում բազմաշերտ կոնֆլիկտի լուծման սկիզբը դնելու համար: Անկարան ձեւականորեն արտահայտվեց ՄԱԿ-ի վերջին նախաձեռնության դեմ եւ փորձեց «համոզել» Կիպրոսի թուրքերի ղեկավարին ընդունել Վիեննայի պայմանները: Հակառակ ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Բուտրոս-Ղալիի թուրքական կողմին խիստ քննադատող զեկուցագրի հետեւանքներ չունեցավ: Անկարան հայտնվեց անել վիճակի մեջ: Անհրաժեշտ էր համաշխարհային հանրության ուշադրությունը շեղել Կիպրոսի հիմնահարցից: Ահա հենց այս պահին էլ լույս աշխարհ հանվեց Թուրքիայում «ահաբեկչական» գործողություններ իրականացնող PKK-ի անդամների Հունաստանում նախաղահ դարձած լինելու վարկածը, եւ թուրքական լրատվական միջոցները զանգվածային հարձակման անցան Աթենքի դեմ: Կրակին յուղ լցրեց նաեւ ներքին գործերի նախարար Նահիթ Մենքեշեն իր հայտարարություններով, թե իբր նրա ձեռքում կան անվիճելի փաստեր Աթենքի եւ PKK-ի կապերի մասին: Ինչ-որ տեղ Կիպրոսից շեղվելու հարցում թուրքերին օգնեց նաեւ Հունաստանի պահանջը ծովային սահմանները միջազգային դրակտիկայում ընդունված 12 մղոնի հասցնելու վերաբերյալ: Հանուն արդարության պետք է ընդունել, որ Հունաստանի պահանջն ավելի քան արդարացի է, քանի որ Թուրքիայի քմահաճույքով նա զրկված է իր առափնյա ջրերում տիրություն անելու եւ նավթահեւանոցման աշխատանքներ կատարելու հնարավորությունից: Անկարան առ այսօր հրաժարվում է ստորագրել համաաստխան միջազգային կոնվենցիան, պատճառաբանելով, թե Էգեյան ծովի հունական կղզիներն այնքան մոտ են Թուրքիային, որ 12 մղոնի կիրառման դեպքում ինքն ընդհանրապես կզրկվի առափնյա շերտից (կարծես թե նույն օրենքը չի տարածվում Հունաստանի վրա): Ամեն անգամ, երբ Հունաստանը հարուցում է այս հարցը, Անկարան մեծ աղմուկ է բարձրացնում եւ սպառնում նույնիսկ պատերազմական գործողություններով: Այս անգամ եւս նա դիմեց իր դիվանագիտական զինանոցի փորձված մեթոդներին: Թուրքական բանակի գլխավոր շտաբում «պատասխան քայլեր» մշակվեցին: Դրանցից առաջինը թուրքա-

ՀԱՄԱՌՈՏ

Պինոչետին հրամայված չի եղել այցելել Ռուսաստան

ՍԱՆՏՅԱԳՈ, 15 ՀՈՒՆԻՍ, ՌԻԱ ՆՈՎՈՍՏԻ: Այն լուրերը, թե գեներալ Աուգուստո Պինոչետը Եւրոպայում իր 27-օրյա շրջագայության ընթացքում այցելելու է Ռուսաստան, ինչպես պարզվեց, խիստ չափազանցված են: Կառավարական «Նասիոն» թերթի հաղորդման համաձայն, Չիլիի ցամաքային ուժերի գլխավոր հրամանատարի ուղեւորությունը պաշտպանության նախարարի հրամանով թույլատրվել էր գեներալի մեկնումից ընդամենը մեկ ամիս առաջ եւ նախատեսում էր այց Չեխիա, Շվեյցարիա եւ Մեծ Բրիտանիա: Հրամանում Ռուսաստանի մասին խոսք չի եղել: Պինոչետի եւրոպական ուղեւորության վերաբերյալ խորհրդարանի ստորին պալատի հարցաքննմանն ի պատասխան, պաշտպանության նախարարությունը պատասխանում է մանրամասն հաշվետվություն, որտեղ պետք է պատգամավորների պալատին հաղորդի այդ ուղեւորության նպատակը, գեներալին ուղեկցող անձանց թվակազմը, ուղեւորության ֆինանսավորողի անունը, ինչպես նաեւ, թե ում հաշվին են ճամփորդում Պինոչետի կինը եւ երկու դուստրերը: Մամուլի հաղորդումների համաձայն, ներկայումս գեներալն իր ընտանիքի հետ գտնվում է Մեծ Բրիտանիայում:

Գերմանիայից արտախսեցին պակիստանցի դիվանագետներ

ԴԵԼԻ, 16 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ ԱՐՄԵՆՊՐԵՍ: Դաշնակցային Գերմանիայի իշխանություններն արտախսել են երկու պակիստանցի դիվանագետների եւ կալանել Գերմանիայի մեկ քաղաքացու, որոնց մերկացրել են միջուկային զենքի ստեղծման համար անհրաժեշտ տեխնոլոգիայի, սարքավորումների եւ նյութերի անօրինական ձեռքբերման եւ Պակիստան ուղարկելու մեջ: Միջազգային փորձագետներն այն կարծիքին են, որ առ այսօր Պակիստանը կուտակել է առնվազն 500 կգ հարստացված ուրան, որը բավական է 25 ատոմային զենք ստեղծելու համար: Նրանց տվյալներով, Պակիստանի գաղտնի ատոմային կենտրոնները ամեն տարի կարող են արտադրել մինչեւ 75 կգ բարձր ասիճանի զտված ուրան:

Ուկրաինան կոշտ քայլեր է անում

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 16 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Վաշինգտոնում գտնվող Ուկրաինայի պաշտպանության նախարար Վիտալի Ռադեցկին հայտարարել է, որ ՆԱՏՕ-ի «Համագործակցություն հանուն խաղաղության» ծրագիրը կկորցնի իր իմաստը Ուկրաինայի համար, եթե Ռուսաստանին այդ ծրագրի շրջանակներում հատուկ կարգավիճակ տրվի: Նրա կարծիքով, ոչ մի երկիր հատուկ կարգավիճակ չպետք է պահանջի Արեւելքի եւ Արեւմուտքի համագործակցության շրջանակներում:

ԱՖՐԻԿԱ

ՀԱՀ-ը դիվանագիտություններ ունի 28 երկրների հետ

ՊՐԵՏՈՐԻԱ, 16 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ժողովրդավարական Հարավաֆրիկյան Հանրապետությունն արդեն դիվանագիտական հարաբերություններ է հաստատել 28 երկրների հետ այն քանից հետո, երբ ապրիլի վերջերին անցկացվեցին ընդհանուր, ոչ ցեղային ընտրություններ: Այդ երկիրը նաեւ միջազգային 10 խոշորագույն կազմակերպությունների անդամ է, ներառյալ ՄԱԿ-ը, Ընկերակցությունը եւ Աֆրիկայի միասնության կազմակերպությունը:

Չորեքշաբթի օրն այստեղ տարածված ՀԱՀ արգործնախարարության զեկուցագրում նշվում է, որ ներկայումս արտաքինամնում գործում են Հարավաֆրիկյան Հանրապետության 69 դեսպանություն, 25 հյուպատոսություն եւ 54 օտարերկրացի դաշտի հյուպատոս:

ՀԱՀ նախագահ Նելսոն Մանդելայի ցուցումով, նախատեսվում է ԱԳՆ կառույցի եւ աշխատակազմի վերակազմում: Հարավաֆրիկյան Հանրապետությունում ներկայումս կան 73 օտարերկրյա դեսպանություն, 56 հյուպատոսություն, 5 առաքելություն եւ 25 դաշտի հյուպատոս:

ՕՍՐԻԱ

Գերմանացիները կմասնակցեն զորահանդեսին

Ֆրանսուա Միտերանը ազգային տոնի կապակցությամբ՝ հուլիսի 14-ի, զորահանդեսին մասնակցելու է հրավիրել եւրոպական կորպուսին, որի կազմում է նաեւ բունդեսվերի ստորաբաժանումը: Իր նախագահության ավարտին նման անսպասելի առաջարկը, կարծես թե հաշտության քայլ է երկու երկրների միջեւ եղած տարաձայնությունների եւ հակասությունների պայմաններում: Եւ դա միգուցե ստեղանի էր հելմուտ Քոլի վիրավորված հպարտությունը, որին չէին հրավիրել Նորմանդիայում դաշնակցային զորքերի ափ իջնելու 50 ամյակի հանդիսություններին, որոնք տեղի ունեցան հունիսի 5-ին: Դրա փոխարեն հուլիսի 14-ի հանդիսություններին Փարիզ կժամանի կանցլեր Քոլը:

Քոլն էլ, իր հերթին, մեծահոգի մի քայլ արեց՝ հանդիպման հենց առաջին օրը հանձնելով Կլոդ Մոնեի մի կտավ՝ 28 գլուխգործոցներից մեկը, որոնք գերմանացիները հափշտակել էին պատերազմի ժամանակ, հայտնաբերվել են նախկին Գերմանական Դեմոկրատական Հանրապետությունում եւ այժմ վերադարձնում են Փարիզին: Դրանք Ռենուարի, Պիսարոյի, Գոգենի եւ իմպրեսիոնիզմի այլ դասականների գլուխգործոցներն են:

Փարիզը եւ Բոնը այս անգամ ընդարկում էին գլխավորապես ոչ թե երկկողմ, այլ համաեւրոպական խնդիրներ: Հուլիսի 1-ից Գերմանիան կես տարի կնախագահի եւրոպական միությունում, այնուհետեւ էսպֆեսը կընդունի Ֆրանսիան: Երկու երկրների ղեկավարները, որոնք համարվում են «եւրոպական միասնացման շոգեքարշերը», հավաստեցին, որ կստեղծվի բարձր մակարդակով աշխատախումբ «համագործակցության կատարելագործման» եւ «գործընթացի զարգացման» համար: Քոլը եւ Միտերանը համաձայնել են ավելի վճռականորեն պայքարել ռասիզմի եւ խտրականության դեմ: Դրա համար անհրաժեշտ է ավելի լավ համաձայնեցնել օրենսդրությունը եւրամիության շրջանակներում, ինչն այնքան էլ հեշտ չի լինի:

Ժամանակի մեծ մասը գրավեց եւրամիության ընդարձակման եւ խորացման խնդիրների քննարկումը: Փարիզը պնդում է միասնացման խորացումը: Բոնը այլ հարցում հակասություններ չի տեսնում պայմանով, որ եւրամիությունը չդառնա ազգ առեւտրի մի հսկայական գոտի: Սա կապված է Բոնի եւ Փարիզի կենտրոնական եւ Արեւելյան եւրոպայի նկատմամբ ունեցած շահերի տարբերության հետ: Բոնը, ինչպես հայտնի է, հանդես է գալիս եւրամիության կազմի մեջ սոցիալիզմից ազատված արեւելաեւրոպացիների շուտափույթ ընդունման օգտին: Փարիզը դա այնքան էլ չի ցանկանում: Տակավին մի քանի տարի առաջ Միտերանը նկատել էր, որ տասնամյակներ անց այդ երկրները հազիվ կարողանան համապատասխանել ներկայացվող պահանջներին: Այժմ գտնվել է ընդառաջման ձեւակերպումը. ընդունելությունը ցանկալի է, սակայն նախ պետք է իրագործել եւրամիության ինստիտուտների բարենորոգումը, իսկ դիմող երկրները պետք է ցույց տան տնտեսական համապատասխան առաջադիմություն: Ըստ էության, Պրահան, Վարշավան, Բուդապեշտը եւ այլ ցանկացողներ առայժմ ստիպված կլինեն սպասել, ոչ ոք չի կարող ասել, թե որքան:

Ինչ վերաբերում է եւրամիության եւ Ռուսաստանի համագործակցության համաձայնությանը, որին առարկում է Փարիզը, ապա հայտնի չի, թե այդ հարցը քննարկե՞լ են Քոլն ու Միտերանը: Հավանաբար Բոնը հուլիսի 1-ից ավելի եռանդով հանդես կգա նրա շուտափույթ ստորագրման օգտին:

Բոննին եւ Փարիզին անհանգստացնում է ատոմային ռեակտորների վիճակը Ռուսաստանում եւ Արեւելյան եւրոպայում, ինչպես նաեւ այն փաստը, որ եւրամիության մնացած անդամները այդ խնդրին պատշաճ ուշադրություն չեն հատկացնում: Ըստ երեւույթին, եւրամիության ղեկավարների հունիսյան հանդիպման ժամանակ երկու երկրները իրենց գործիչների ուշադրությունը վերստին կհրավիրեն համատեղ նախաձեռնության անհրաժեշտության վրա: Իսկ Նեապոլում, Յոթնյակի հանդիպման ժամանակ, Ուկրաինայից նորից կպահանջեն Չեռնոբիլի ատոմակայանի անջատումը:

«Սեգոդնյա», 2 հունիս

ԱՖՂԱՆՍՏԱՆ

Քաղաքացիական պատերազմի ճիրաններում

ԴԵԼԻ, 16 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Քաբուլի մի շարք շրջաններում կատաղի ընդհարումներ են տեղի ունեցել Աֆղանստանի նախագահ Բուրհանուդին Ռաբանիի զորքերի եւ նրա գլխավոր քաղաքական հակառակորդի՝ վարչապետ Գուլբեդին Հեքմաթիարի կազմավորումների միջեւ: Մինչդեռ նախագահի ներկայացուցիչը չորեքշաբթի հայտարարել է, որ Ռաբանին որոշել է երկարաձգել իր լիազորությունների ժամկետը, որը լրանում է հունիսի 30-ին: Ներկայացուցչի ասելով, նախագահն իր պաշտոնում կմնա եւս վեց ամիս: Իր հերթին Հեքմաթիարի ներկայացուցիչը հայտարարել է, որ նախագահի լիազորությունների երկարաձգումը կնշանակի մարտական գործողությունների շարունակում: Նա արյունահեղության համար պատասխանատվությունը բարդել է Ռաբանիի վրա եւ նրանից պահանջել է անհապաղ հրաժարական տալ, դա համարելով խաղաղության հաստատման պարտադիր պայման: Աֆղանական հակամարտ խմբավորումների միջեւ այս տարվա հունվարից չդադարող արյունահեղ մարտերի ընթացքում, Քաբուլի տվյալների համաձայն, մայրաքաղաքում զոհվել է 2,5 հազար եւ վիրավորվել 17 հազար մարդ: Կես միլիոնից ավելի բնակիչներ ստիպված փախել են Քաբուլից եւ փրկություն գտել երկրի առավել ապահով շրջաններում:

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մշակույթ

Հաղթանակ Ռավեննայի բիենալեում

ՇԱՀԵՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ռավեննան Դանտեի հաղարն է: Երկու տասնամյակ է արդեն, այստեղ կազմակերպվում են Դանտեին նվիրված խնդակագործների միջազգային (երկամյա) ցուցահանդես-մրցույթներ: Քաղաքն այդ օրերին տոնական զգեստ է հագնում: Տեղի է ունենում ժողովրդական շուք, մատուցվում հատուկ պատարագ, շեշտվում դանտեական փառատոնի նշանակությունը:

Թիվը հասնում է հինգ հարյուրի: Դիտում ու մի դահ վերադրում եմ մրցույթի յոթ հայ մասնակիցների հոգեվիճակը, որոնք Ավստրալիայի, ԱՄՆ-ի, Անգլիայի, Գերմանիայի, Ռումինիայի, Իսպանիայի, վերջապես Իտալիայի կողմից Հայաստանն են ներկայացնում, պայքարում հանում իրենց երկրի ստեղծագործական դասվի: Արդեն ավանդական դարձած այդ ցուցահանդեսում տրվում են երեք գլխավոր մրցանակ եւ քսան այլ մրցանակ-մեդալներ, տարբեր կազմակերպությունների, նաեւ դասի կողմից: Քանդակագործներից պահանջվող բնական գրեթե միշտ նույնն է «Մուտք դեպի դանտեական աշխարհ»:

Չհաղթեմ հայտնելու, որ տասնվեց անդամներից բաղկացած ժյուրին միաձայն որոշում է հայ քանդակագործ Գարեգին Դավթյանին շնորհել մրցույթի առաջին տեղը՝ մեծ մրցանակը:

Հետաքրքիր ու արդիաբուն լուծում ունի Գարեգինի աշխատանքը: Ամբողջ կոմպոզիցիան կամարաձեւ դուռ է ներկայացնում: Նրա մեջտեղում մակերեսին, ասես ռումբի հուժկու պայթյունից ճեղքեր, բացվածքներ են առաջացել: Այդ բացվածքներն իրենց ձեւերով ցցածիգ ու ներազդեցիկ են: Եզրագծերի վրա, խիստ ընդհանրացված ձեւերով ու ահազանգ շեփորող հրեշականման մարմիններն ավելի են սրում դասն ողջ մակերեսի արտահայտչականությունը, մեր օրերի հասմահունչ նրա բովանդակությունը:

Դուռը, ինչպես արբաղատկերներում, բացվում է՝ ու դիտողին թվում է, թե լույս, Աստվածամայր է տեսնելու: Սակայն հայտնվում է մի երկրորդ դուռ, անանցանելի, սարսափազդու, հավիտենական բանտ հիշեցնող դուռ: Դատապարտվածության, անել վիճակի աղոտումները միանգամից պաբարում են դիտողին: Այդ «պարզ» դռան հիատեսկու քառակուսիների վրա դանտեական աշխարհի պատկերումներ են, համամարդկային կյանքի դրվագներ՝ հավիտենության խորհուրդ կրող ծածկույթով...

Երկար դիտում եմ լուսանկարները եւ կրկին համոզվում, որ արվեստի բարձրարժեք երկը ի վերջո կյանքի արձագանքն է եւ ծնվում իրական աղոտումներից: Գարեգինի գործը իրականի եւ հոգեկանի դաշնության արտահայտությունն է: Եւ զարմանալի չէ, որ այդ գործը, թեեւ չի ընդգրկվել ցուցահանդեսի կատալոգում (հեղինակը Ռավեննա է հասել ցուցահանդեսի բացումից հետո), չի վիրել աչալուրջ աչքից ու արժանացել է բարձրագույն պարգեւի: Բացի Գարեգին Դավթյանից բիենալեին մասնակցել են Սամվել Ղազարյանը, Գեւիկ Բաղդասարյանը, Գագիկ Ղազարյանը, Լեւոն Վարդանյանը եւ Մարիամ Հակոբյանը: Նրանցից Սամվել Ղազարյանին շնորհվել է Դանտեի ընկերության սահմանած ոսկե մեդալը, Գեւիկ Բաղդասարյանին՝ բրոնզե մեդալը, իսկ ամբողջ խումբն իր օրինակելի ու տոլավորիչ մասնակցության համար արժանանում է Ազգային մրցանակի, որ իրավունք է տվել Արմենիա երկրին հաջորդ բիենալեին իր ներկայացուցիչը ունենալու ժյուրիի կազմում: Այդ մրցանակի դափնեպսակը տրաները տեղադրում են Դանտեի շիրմին:

Հիշենք, որ Ռավեննայի II-րդ բիենալեի յոթ հայ մասնակիցներից միայն երեքին է հաջողվել ներկա լինել մրցույթին: Պատճառը՝ չեն կարողացել ճանապարհածախս հայթայթել: Հիշենք նաեւ, որ նրանք իրենց աշխատանքները պատրաստ ոչնչ է բրոնզից ձուլեին, ուրեմն նյութ էր հարկավոր ճարել, հարկավոր էր երեւանյան ծմեռվա պայմաններում ամեն օր տասնյակ կիլոմետրեր կտրել մինչեւ ձուլարան ու հանձնել ձեռնունայն հետ վերադառնալ: Գուցե հարցերում կամքն է ենթագիտակցորեն խոսել տրաների առում եւ դանտեական ճանապարհ անցնելով են նրանք արժանացել Դանտեի մրցանակին: Նրանց հաղթանակը, որ նոր Հայաստանի մշակութային անդրանիկ հաղթանակներից է, որոնց մեզ ուրախացնում, նույնքան մսածել է տալիս:



ԵՐԵՎԱՆ

Մանկապարտեզ. Կոճակը սեղմում ես, ու...

Մայրիկներին շիլա կերցրին, հայրիկներին ատիտեցին պարկ հագած ցասկոտել, խնդիրներ լուծեցին, խնդիրներ առաջարկեցին, երգեցին, պարեցին... Երեւանի Խորհրդային շրջանի թիվ 267 մանկապարտեզի սաները՝ հինգշաբթի իրենց խաղահանդեսում, որի մահաղացումն ու սցենարը ծնվել է ՀՀ լուսավորության նախարարության մանկապարտեզների վարչությունում: Երեխաները փորձեցին բացատրել նաեւ, թե ինչու է Հայաստանում ձյունը սեւ կամ ինչպես են հավերը թռչում-անհետանում երկրից: Քաջ Նազարն ու Ուսիանն իրենց հանրահայտ լեզվակռվում եզրակացության հանգեցին, որ իրենց մանկապարտեզն այն է, որ կոճակը սեղմում ես, ու ամեն ինչ բերում են: Տարակուսելու կարիք չկա, որովհետեւ մանկապարտեզը գտնվում է Խորհրդային շրջանի ներքին գործերի բաժանմունքի ամենաուշադիր հովանավորության ներքո. ձմռանը՝ վառելիք, կլոր տարին՝ սնունդ ու նվերներ: Իհարկե, շրջանում խոնարհում են այդ մասին հրապարակելիս զգույշ լինել, որովհետեւ խորհրդարանում արդեն դժգոհություններ են լսվում այդ առիթով: Լուսնախարար Հայկ Ղազարյանն իր հերթին նկատեց, որ անհանգստանալու ոչինչ չկա. «Հարցում են՝ որտեղից, բոլ իրենք էլ պատասխանեն»:

ՀՀ լուսավորության փոխնախարար Վլադիմիր Մշեցյանն ուշադիր հետեւում էր երեխաների մրցույթին նախարարության մրցանակակիրներին որոշելու համար: Հայկ Ղազարյանը փոքրիկ Յանային երբության եւ ֆնբության մրցանակը հանձնելու առիթով նշեց, որ՝ տեղակալը մի բացթողում, իհարկե, արել է. «Նման մրցանակի արժանի էր նաեւ երաժշտության դասուհարակչուհի Միրան Անանյանը, որը հրաշալի անցկացրեց խաղահանդեսը»:

ՍՊԱՐԱՊԵՏ ԱՂԱՍՅԱՆԻ ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Բացթողումը ստվեց, իսկ յոթնագույն ծաղկի թերթիկը (ի դեղ, կանաչը) պոկելիս եւ երազանք գուշակելիս նախարարն ասաց, որ կարելի՞ Հայաստանի բոլոր մանկապարտեզները տեսնել այնպես, որ կոճակը սեղմվի ու... ցանկությունները կատարվեն:

Ռ. Խ.

ՍՓՅՈՒՌՔ

■ Վենետիկի հանրապետության հայ լեզվի եւ մշակույթի խստացյալ դասընթացը, որն անցկացվում է Պոնտոս ընկերության հանձնարարությամբ, այս տարի տեղի կունենա օգոստոսի 3-25-ը: Դասընթացն ունի հինգ հիմնական մակարդակ՝ սկսնակներից մինչեւ առաջադեմներ եւ ավարտվում է հանդիսավոր հանդեսներով՝ օգոստոսի 26-ին: Դասերը տեղի կունենան ամեն օր, բացի շաբաթ եւ կիրակի օրերից: Մասնակցողներին կընձեռվեն բնակվելու հնարավորություններ պատմական Վենետիկի հանրապետական հանրակացարանի մեջ, մոտ այն շենքերին, ուր անց են կացվելու դասընթացները:

■ Փարիզի «Օրֆե» հրատարակչությունը ֆրանսերեն լեզվով լույս է ընծայել «Հեքիաթներ եղեր եւ այլ բանաստեղծություններ» հատորը, որ ամփոփված է անզուգական Դանիել Վարուժանի ստեղծագործություններից մի գեղեցիկ փունջ հայենի գրող Վահե Գոդելի ընտրությամբ, թարգմանությամբ եւ խմբագրությամբ:

■ Նյու Յորքի Մորգանի անվան մատենադարանում բացված հայկական միջնադարյան նկարազարդ ձեռագրերի ցուցահանդեսը, որն առաջին անգամ ամերիկացիներին է ներկայացնում մեր մշակույթի պատմության այդ եզակի նմուշները, առիթ է ծառայել, որ Ֆրանսիայում լույս տեսնող «Կոնեասնս դե զ'ար» արվեստի ամսագրերն իր մայիսյան համարում խիստ շահեկան մի հոդված հրատարակի հայկական մանրանկարչության մասին, համեմելով այն գեղեցիկ նկարներով:

ՍՈՒՐ ԳՐՈՒՅՑ

Յիրուցան

ՎԱՐՈՒԺԱՆ ԵԱԼԲԱՆԴՅԱՆ

◆ *Մի ժամանակ ամաբելիլու պես խորհուրդ էին տալիս՝ «Շատ գիտես, հիչ խոսիր»: Փիմա իմացողն էլ է շատ խոսում:*

◆ *Խմելը կարելի է բողեել, բայց ու՞մ բողեել:*

◆ *Համեստությունը նկատաբեր է նաեւ այն տեսակետից, որ գլուխը կախ հայելու դեպքում մնծանում է փոդ զսենլու հավանականությունը:*

◆ *Փոդ չունենալը նպատակահարմար է, որովհետեւ այդ դեպքում դու հատատս գիտես, թե ինչու ես վատ զգում:*

◆ *Երբ ծերությունն իր հետ խնամատարություն չի բերում, անիմաստ է ծերանալը:*

◆ *Փչացած չվի վրա բուխս նստելու դեպքում ճուտիկը փչացա՞ծ է դուրս գալիս:*

«ՄԱՐՍ ԽԱՆՅԱՆԻ» ՀԱՄԵՐԳԱՍԱՐ
28 մայիսի - 24 հուլիսի
«ԱՇԽԱՐԸ ԵՎ ՄԵՆՔ»
Ռուսական երաժշտության փառատոն - 94 թ.
Աբոնեթային համերգաշար Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ
Գեղարվեստական ղեկավար եւ գլխավոր դիրիժոր՝ ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ
18 հունիս Աբոնեմենտ «Ա» Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ
Ս. ԼՅԱՊՈՎ - 3 սիմֆոնիկ պատկեր («Բաբա-յագա», «Կախարդական լիճ», «Քիհիմորա»)
Ս. ՊՐՈԿՈՖԵՎ - Կոնցերտ-շրաբակի եւ նվագախմբի համար թիվ 1
Մենակատար ՆԻԿՈԼԱՅ ՍԱՎՈՅԱՆՑ
Ս. ՌԱԽՄԱՆԻՆՈՎ - Սիմֆոնիա թիվ 2
Դիրիժոր՝ ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ
19 հունիս Աբոնեմենտ «Բ» Հայաստանի Ֆիլհարմոնիկ նվագախումբ
Մ. ԲՈՐՈԴԻՆ - «Իգորի Իգոր» օպերայի նախերգանքը
Ս. ՌԱԽՄԱՆԻՆՈՎ - «Ռապսոդիա Պագանինիի թեմայով» դաշնամուրի եւ նվագախմբի համար
Մենակատար ԷԴՈՒԱՐԴ ՍԻՈՒՆՍԱՐՈՎ (Ռուսաստան)
Դ. ՇՈՍՏԱԿՈՎԻՉ - Սիմֆոնիա թիվ 10
Դիրիժոր՝ ԼՈՐԻՍ ՃԳՆԱՎՈՐՅԱՆ
Սկիզբը՝ ժ. 17-ին

ՀՈԲԵԼՅԱՆ

Նշվեց Թումանյանի 125-ամյակը

ՅՈՒՐԻ ՍՈՒՔԱՍՅԱՆ

«Մենք չենք ձգտել այդ ցերեկույթին մասնակից դարձնելու հայտնի կոլեկտիվների ու կազմակերպությունների, պրոֆեսիոնալ կատարողների, հունիսի 15-ին ասաց Հովհաննես Թումանյան բարեգործական ֆոնդի տնօրեն, բանաստեղծի թոռնուհի Իրմա Սաֆրազբեկյանը Արամ Խաչատրյանի տուն-թանգարանում: Մեր նոյասակն էր հիմնականում բացահայտել Թումանյանի աշխարհը՝ ինչպես որ դրսեւորվում է կյանքում, դպրոցում, բակում: Եւ, չնայած դրան, այնքան շատ էին մասնակցել ցանկացողները, «իր տված գանձերը» նրան վերադարձնել ցանկացող կոլեկտիվներն ու անհատները, որ դժվար էր ընդառաջ գնալ բոլորին:

Պրոֆեսիոնալ վարպետությամբ երգում է Թումանյանի անվան մեջ նաեւ կարգ դպրոցի աղջիկների երգչախումբը՝ Անահիտ Հարությունյանի ղեկավարությամբ: Յուրաքանչյուր ոգեկոչման խորհրդով հնչում է 1915 թ. գրված «Հայրենիքիս հետ» բանաստեղծությունը՝ Ալեքսանդր Հարությունյանի երաժշտությամբ:

Այնուհետեւ «բեմ են ելնում» «Սարոն», «Կախարդիկը», «Շունն ու կատուն» երաժշտականացված բարեկանացված լեգենդը, հաջորդում են՝ «Ախ, ինչ լավ է սարի վրա», երգում է Հասմիկ Ալեքսանյանը, Հոկտեմբերյանի թիվ 4 դպրոցի՝ միեւնույն բակում ապրող երեխաների ներկայացրած «Կիկոսի մահը» եւ «Անբան Հուսին», ինչպես նաեւ Արաբկիրի Հայորդյաց դպրոցի հանդիսի պարերը՝ «Ծիրանի ծառ», «Տոնական», եւ մյուս խմբերը:

Հաճելի անակնկալ էր Հնդկաստանից ամառային արձակուրդին Հայաստան եկած՝ Հովսեփ եւ Թնար Սեֆերյանների որդիների՝ Նազարեթի, Նարեկի եւ Ալեքսիսի «Կանանչ ախտերը», «Իմ երգը», «Լուսավորչի կանթեղը»:

Սեւադայի պատանիների ցուցահանդեսը Երեւանում

Երեւանի Քոչար բանգարանում հունիսի 22-ին, ժամը 15:00-ին կբացվի գեղանկարիչ Սամվել Սեւադայի ցուցահանդեսը, որը կազմակերպել է Հայաստանի մշակույթի նախարարությունը: Սեւադան 1990-ից ի վեր ապրում է Միացյալ Նահանգներում, Լոս Անջելեսում. ունի սեփական ստուդիա, ուր նկարչություն է ուսուցանում տեղի հայ մանուկներին:

ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Հայաստանի նկարիչների նոր ղեկորդը

Հինգշաբթի Հայաստանի նկարիչների միության 14-րդ համագումարը համաշխարհային ռեկորդ սահմանեց. մոտ 800 անդամ ունեցող ստեղծագործական միության անունից վարչության 15 հոգուց բաղկացած կազմ, ընդայնում՝ նախագահ ընտրելու համար քվեարկության դրվեց թեկնածուների մոտ 130 անուններից կազմված ցանկ:

Թեկնածուների թվում են միության ներկայիս նախագահ Պողոս Հայթայանը, Հենրիկ Իգիթյանը, Մարինա Ստեփանյանը, Մարո Մարությանյանը (արվեստաբաններ), նկարիչներ Էդվարդ Իսաթեկյանը, Ասոն Կարապետյանը, Սմբատ Պիրոյանը, Մարիտոս Բաղալյանը եւ էլի հարյուրից ավել նկարիչ ու արվեստաբան:

Երեկ, ըստ քվեարկության արդյունքների, հաստատվեց միության նորընտիր վարչությունը, որն էլ կընտրի միության նախագահին:

Ռ. Խ.

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Մարզական

LEVON TRAVEL

«Ազգը» լուսաբանում է «Լեւոն Թրավըլի» աջակցությամբ

WorldCup USA94

ՖԻՖԱ-ի դասակարգում

Ով ինչ հնարավորություններ ունի

ՍՈՒՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ
Լոս Անջելես

Այս տողերը շարադրվում են հունիսի 16-ին, ախմարհի առաջնության մեկնարկից ընդամենը մեկ or առաջ: Այսօր, Լոս Անջելեսում, իրոք իսկական ֆուտբոլային եղանակ է (16-18 աստիճան): Ամերիկան իրեն հատուկ մասնաբաժնությամբ, ժամանակակից տեխնիկական հագեցվածությամբ, ամենաբարձր մակարդակով նախապատրաստվել է ախմարհի առաջնությանը, սակայն բազմաթիվ հեռուստատեսային ծրագրերում առայժմ այս երկրին հատուկ գովազդների առատություն չի նկատվում:

«Լոս Անջելես թայմզը», որն ամեն or 10-14 էջանոց սպորտի բաժին է ունենում, միայն այսօր ախմարհի առաջնությանը նվիրված մարզական բաժնից զատ 14 էջանոց հատուկ ներդիր է տպագրել: Իսկ թերթի մարզական բաժնի էջերը հիմնականում տրամադրված են հոկեյի NHL-ի «Ստենլիի գավաթի» խաղարկությունում հաղթանակ տարած Նյու Յորքի «Ռեյնջերսին» եւ բասկետբոլի NBA եզրափակիչ սերիայի 4-րդ հանդիպմանը Հյուստոնի «Ռոկետս» եւ Նյու Յորքի «Նիքս» թիմերի միջեւ, որը տեղի ունեցավ երեկ եւ ավարտվեց «Նիքսի» հաղթանակով 91-82 հաշվով: Ընդհանուր հաշիվը հավասարվեց (2-2), բայց առջեւում դեռ 3 խաղ կա, եթե իհարկե կողմերից որեւէ մեկը 2 անընդմեջ հաղթանակ չտանի: Դա նշանակում է, որ ուշադրությունը ֆուտբոլի ախմարհի առաջնության նկատմամբ ԱՄՆ-ում կբեղվի:

Այնուամենայնիվ Լոս Անջելեսում սպասելիքները մեծ են: Ենթադրվում է, որ ախմարհի առաջնությունն այստեղ 650 միլիոն դոլլարի եկամուտ կունենան:

Ֆուտբոլի միջազգային ֆեդերացիան հրապարակել է ախմարհի առաջնության մասնակից բոլոր 24 թիմերի մրցաշարում հաղթանակ տանելու հավանականության ցուցակը: Հաշվի են առնվել թիմերի նախկին նվաճումները: Անկախ այն բանից, որ փոխվում են ֆուտբոլային սերունդները, ՖԻՖԱ-ն միշտ կայուն գնահատական ունի հավակնորդների համար եւ հատկապես 1-ին 4 տեղերում գտնվող թիմերի կարգավիճակները չեն փոխվում: Ախմարհի չեմպիոն դառնալու ամենամեծ հավանականությունը ըստ ՖԻՖԱ-ի, ունի Բրազիլիայի հավաքականը, որի հնարավորությունները գնահատում են 3/1: Միայն Նիգերիայի հավաքականի արժեքները են փոխվել այն բանից հետո, երբ վերջիններս նվաճել են Աֆրիկայի չեմպիոնի կոչումը: Մինչ այդ Նիգերիայի թիմի հնարավորությունները գնահատվում էին 100/1, իսկ հիմա դարձել են 33/1:

Ահա ախմարհի 15-րդ առաջնության մասնակից 24 թիմերի արժեքների ցանկը: 1. Բրազիլիա՝ 3/1, 2. Գերմանիա՝ 4/1, 3. Իտալիա՝ 5/1, 4. Հոլանդիա՝ 6/1, 5. Արգենտինա՝ 8/1, 6. Կոլումբիա՝ 8/1, 7. Իսպանիա՝ 22/1, 8. Բելգիա՝ 28/1, 9. Ռուսաստան՝ 33/1, 10. Իռլանդիա՝ 33/1, 11. Նիգերիա՝ 33/1, 12. Շվեյցարիա՝ 40/1, 13. Նորվեգիա՝ 40/1, 14. Բոլիվիա՝ 40/1, 15. Ռումինիա՝ 40/1, 16. Շվեդիա՝ 40/1, 17. ԱՄՆ՝ 50/1, 18. Մեքսիկա՝ 50/1, 19. Բուլղարիա՝ 50/1, 20. Կամերուն՝ 80/1, 21. Հունաստան՝ 80/1, 22. Մարոկկո՝ 200/1, 23. Հարավային Կորեա՝ 250/1, 24. Սաուդյան Արաբիա՝ 500/1:

Ավելանժը սպառնում է

ՖԻՖԱ-ի նախագահ Ժոաո Ավելանժը սպառնում է, որ մրցավարներից նրանք, ովքեր վճռական չեն լինի թիկունից մրցակցին հարվածող ֆուտբոլիստների նկատմամբ, եւ կարմիր քարտ ցույց չեն տա, անմիջապես տուն կուղարկվեն: Բոլոր մրցավարները տեղեկացվել են այդ մասին:

Ռայկարդը կմասնակցի՞

Հոլանդիայի հավաքականի կիսապաշտպան Ֆրանկ Ռայկարդի դաշտ դուրս գալը Սաուդյան Արաբիայի հավաքականի հետ խաղում կասկածի տակ է: Ռայկարդը Տորոնտոյում, Կանադայի հավաքականի դեմ մրցելիս 2-րդ կեսին հեռացել է դաշտից ոտքի մկանի վնասվածքի պատճառով:

Ամերիկացիներից շատերը անտարբեր

Մայիսի 23-ից 25-ը Հարիս Պոլը 1253 չափահասների հարցում է արել ախմարհի առաջնության կապակցությամբ: 71 տոկոսը դեռեւս չգիտի, որ ախմարհի առաջնությունն անցկացվելու է ԱՄՆ-ում: Հարցմանը մասնակցածների 56 տոկոսը որեւէ խաղ դիտելու ցանկություն չունի: 65 տոկոսը մարզադաշտ գնալու ցանկություն չունի: Միայն 38 տոկոսն է տեղյակ, որ առաջնությունն անցկացվելու է ԱՄՆ-ում: Հավանական սխալը կազմում է 3 տոկոս:

Ամերիկացիները ջենտլմեն

Ռումինիայի հավաքականի կիսապաշտպան Իլիե Դումիտրեսկուն այն հարցին, թե ինչն է իրեն դուր եկել ԱՄՆ-ում 1-ին շաբաթվա ընթացքում գտնվելիս, պատասխանել է. «Ամերիկացիների վերաբերմունքը»:

ԱՄՆ-94

Նիգերիայի հավաքականը դեռ չի ժամանել ԱՄՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, 14 ՀՈՒՆԻՍ: Ընդամենը երեք or է մնացել ֆուտբոլի ախմարհի 15-րդ առաջնության մեկնարկին, եւ Նիգերիայի հավաքականը մասնակից 24 թիմերից միակն է,

որը չի ժամանել ԱՄՆ:

Աֆրիկյան թիմի ուշացման պատճառը մուտքի այցագրերն են, որ չեն ստացվել ԱՄՆ-ից: Նիգերիայի հավաքականը ԱՄՆ պետք է ժամաներ անցած երկուշաբթի օրը՝ հունիսի 13-ին: Ախմարհի առաջնության կազմկոմիտեն անհամբեր սպասում է թիմի ժամանելուն:

ՖԻՖԱ-ի ներկայացուցիչ Անդրեաս Հերբեն նույնպես հաստատել է, որ Նիգերիայի հավաքականի ուշացումը կապված է միայն մուտքի այցագրերի հետ: Իր հերթին ախմարհի առաջնության կազմկոմիտեի ներկայացուցիչն ավելացրել է, որ որոշ այցագրեր ճիշտ չէին ձեւակերպված, որի պատճառով բոլորը հետաձգվեց: Այնուամենայնիվ, պարզվում է, որ վաղն առավոտյան աֆրիկացի ֆուտբոլիստները կժամանեն ԱՄՆ: Չնայած թմբուղեղերի ներմուծման պատճառով Նիգերիայից բոլորները ԱՄՆ խիստ սահմանափակ են եւ արդեն սպասված, այնուամենայնիվ Միացյալ Նահանգների կառավարությունը թույլ է տվել լրացուցիչ թռիչք կազմակերպել Նիգերիայի մայրաքաղաք Լագոսից, որը թմբուղեղերի առաքման կենտրոններից մեկն է:

Ս. Բ.

ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ախմարհի գավաթը Բրազիլիայի հավաքականի՞ն

USIS-ի ախտասակից Էրիկ Գրինը Վաշինգտոնից հաղորդում է, որ Բրազիլիան, ըստ ֆուտբոլի միջազգային 45 լրագրողների շրջանակում անցկացված հարցման արդյունքների, առաջիկա առաջնության մրցումներում կհիրանա ախմարհի գավաթին: Հարցման ենթարկված այդ լրագրողներից 32-ը առաջնությունը տվեցին Բրազիլիային՝ 452 միավորով: Այդ կանխատեսումը նրանք արել էին հատկապես հունիսի 12-ի ընկերական հանդիպման ընթացքում Սալվադորի նկատմամբ Բրազիլիայի 4-0 հաշվով տարած տպավորիչ հաղթանակից հետո:

Ըստ նույն լրագրողների կանխատեսման, 2-րդ տեղը կգրավի Գերմանիայի ազգային հավաքականը, 359 միավորով, 3-րդը՝ Հոլանդիան, 4-րդը՝ Արգենտինան, իսկ 5-րդը՝ Կոլումբիան: Հաջորդ տեղերը գրավող երկրները կլինեն՝ հաջորդաբար, Իտալիան, Բելգիան, Իռլանդիան, Նիգերիան, Իսպանիան, Նորվեգիան, Մեքսիկան, Մ. Նահանգները, Բուլղարիան, Շվեդիան, Շվեյցարիան, Կամերունը եւ Բոլիվիան: Վեց երկրներ՝ Հունաստանը, Կորեան, Մարոկկոն, Ռումինիան, Ռուսաստանը եւ Սաուդյան Արաբիան հարցման ենթարկված 45 լրագրողների կողմից ոչ մի միավոր չեն ստացել:

Ներկայացնում ենք ախմարհի առաջնության մասնակիցներին

ԱՄՆ

1	Մեոլա	21.02.69	ԱՄՆ հավաքական
2	Լաստեր	28.09.70	ԱՄՆ հավաքական
3	Բարնս	14.05.70	ԱՄՆ հավաքական
4	Կոյման	04.07.63	«Կրուզ Ազուլ» (Մեխ.)
5	Դուլի	21.05.61	ԱՄՆ հավաքական
6	Հարկս	08.03.67	«Դերբի Քաունթի» (Անգ.)
7	Պերես	08.11.63	ԱՄՆ հավաքական
8	Սյուարս	28.03.69	«Վիլլեմ II» (Հոլանդ.)
9	Ռամոս	21.09.66	«Ռեալ» Բետիս (Իսպ.)
10	Վեգերլի	19.03.64	«Քովենթրի Սիթի» (Անգ.)
11	Վինալդա	09.06.69	«Բոխում» (Գերմ.)
12	Սոմեր	27.02.69	«Լուտոն Թաուն» (Անգ.)
13	Ջոնս	16.06.70	ԱՄՆ հավաքական
14	Կլոդաս	01.09.66	ԱՄՆ հավաքական
15	Մուր	23.02.71	ԱՄՆ հավաքական
16	Սորբեր	14.05.71	ԱՄՆ հավաքական
17	Բալբոա	08.08.67	ԱՄՆ հավաքական
18	Ֆրիդել	18.05.71	ԱՄՆ հավաքական
19	Ռեյնա	20.07.73	ԱՄՆ հավաքական
20	Կալիֆորի	09.03.64	ԱՄՆ հավաքական
21	Կլավիյո	23.01.57	ԱՄՆ հավաքական
22	Լալաս	01.06.70	ԱՄՆ հավաքական

Ավագ մարզիչ Վելիքոր Միլուտինովիչ (Սերբիա)

ԿՈԼՈՒՄԲԻԱ

1	Կորդոբա	02.02.70	«Ամերիկա դե Քալի»
2	Էսկոբար	13.03.67	«Ատլետիկո Նասիոնալ»
3	Մենդոսա	08.11.61	«Ատլետիկո Խունիոր»
4	Հերերա	12.06.62	«Ատլետիկո Նասիոնալ»
5	Գավիրիա	27.11.69	«Ատլետիկո Նասիոնալ»
6	Գոմեզ	08.12.59	«Ատլետիկո Նասիոնալ»
7	Դե Ավիլա	21.12.62	«Ամերիկա դե Քալի»
8	Լոզանո	30.03.72	«Ամերիկա դե Քալի»
9	Վալենսիանո	18.03.72	«Ատլետիկո Խունիոր»
10	Վալդերամա	02.09.61	«Ատլետիկո Խունիոր»
11	Վալենսիա	06.02.68	«Բավարիա» (Գերմ.)
12	Մոնդրագոն	21.06.71	«Արգենտ. Խունիորս»
13	Օրտիզ	20.09.68	«Կալդաս»
14	Ալվարես	30.09.65	«Ամերիկա դե Քալի»
15	Պերես Լ.	29.12.63	«Ատլետիկո Խունիոր»
16	Արիստիսաբալ	09.12.71	«Ատլետիկո Նասիոնալ»
17	Սերնա	22.01.68	«Ատլետիկո Նասիոնալ»
18	Կորտես	19.10.68	«Միլոնարիոս»
19	Ռինկոն	14.08.66	«Պալմեյրաս» (Բրազ.)
20	Պերես Վ.	09.08.67	«Ամերիկա դե Քալի»
21	Ասորիլա	10.11.69	«Պարմա» (Իտալիա)
22	Պազո	04.04.64	«Ատլետիկո Խունիոր»

Ավագ մարզիչ Ֆրանսիսկո Մատուրանա

ԲՐԱԶԻԼԻԱ

1	Տաֆարել	08.05.66	«Ռեջիանա» (Իտալ.)
2	Ժորժինիո	17.08.64	«Բավարիա» (Գերմ.)
3	Ռիկ. Ռոխա	11.09.62	«Վասկո դա Գամա»
4	Ռիկ. Գոմես	13.12.64	«Պարի Ս. Ժ.» (Ֆր.)
5	Մաուրո Սիլվա	12.01.68	«Դեպորտիվո» (Իսպ.)
6	Բրանկո	04.04.64	«Ֆլումինենսե»
7	Բեբետո	16.02.64	«Դեպորտիվո» (Իսպ.)
8	Դունգա	31.10.63	«Շտուտգարտ» (Գերմ.)
9	Ջինյո	17.06.67	«Պալմեյրաս»
10	Ռայի	15.05.65	«Պարի Ս. Ժ.» (Ֆր.)
11	Ռոմարիո	29.01.66	«Բարսելոնա» (Իսպ.)
12	Ֆեսսի	10.01.65	«Սան Պաուլո»
13	Ալդաիր	30.11.65	«Ռոմա» (Իտալիա)
14	Կաֆու	07.06.70	«Սան Պաուլո»
15	Մ. Սանտոս	15.09.69	«Բորդո» (Ֆրանսիա)
16	Լեոնարդո	05.09.69	«Սան Պաուլո»
17	Մազինիո	08.08.66	«Պալմեյրաս»
18	Պ. Սերժիո	02.06.69	«Բայեր» Լ. (Գերմ.)
19	Մյուլլեր	31.01.66	«Սան Պաուլո»
20	Ռոնալդո	22.09.76	«Կրուզեյրո»
21	Վիոլա	01.01.69	«Կորինթիանս»
22	Ժիլմար	13.01.59	«Ֆլամենգո»

Ավագ մարզիչ Կարլոս Ալբերտո Պարեյրա

ՇՎԵԴԻԱ

1	Ռավելի	13.08.59	«Գոթենբորգ»
2	Նիլսոն Ռ.	27.11.63	«Հելսինգբոգս»
3	Անդերսոն Պ.	18.08.71	«Բորուսիա» Մ. (Գերմ.)
4	Բյորկլունդ	15.03.71	«Գոթենբորգ»
5	Լյունգ	08.01.66	«Գալաթասարայ» (Թ.)
6	Շվարց	18.04.69	«Բենֆիկա» (Պորտ.)
7	Լարսոն	20.09.71	«Ֆեյենորդ» (Հոլանդ.)
8	Ինգեսոն	20.08.68	«Էյնդհովեն» (Հոլանդ.)
9	Ֆեռեն	20.03.67	«Նապոլի» (Իտալիա)
10	Դահլին	16.04.68	«Բորուսիա» Մ. (Գերմ.)
11	Բրոլին	29.11.69	«Պարմա» (Իտալիա)
12	Երիսոն Լ.	21.09.65	«Նորշոպինգ»
13	Նիլսոն Մ.	28.09.68	«Գոթենբորգ»
14	Կաձակ	05.04.69	«Գոթենբորգ»
15	Երիսոն Ջ.	24.08.67	«Կայզերսլաուտեռն»
16	Լիմոյա	24.09.65	«Էվերտոն» (Անգլիա)
17	Ռեհն	22.09.66	«Գոթենբորգ»
18	Միլդ	14.06.71	«Սերվեթ» (Շվեյց.)
19	Անդերսոն Կ.	06.10.67	«Լիլ» (Ֆրանսիա)
20	Էռլինգմարկ	08.07.68	«Գոթենբորգ»
21	Բլոմկվիստ	02.05.74	«Գոթենբորգ»
22	Հեդման	19.03.73	ԱԻԿ Ստոկհոլմ

Ավագ մարզիչ Թոմաս Ավենսոն

ՇՎԵՅՑԱՐԻԱ

1	Պասկոլո	09.05.66	«Սերվեթ»
2	Հոսսիգեր	07.11.67	«Սիոն»
3	Կանտեն	02.05.70	«Սիոն»
4	Հեռ	25.10.65	«Սիոն»
5	Գեգեր	05.11.60	«Սիոն»
6	Բրեգի	17.01.58	«Յանգ Բոյզ»
7	Սուտեր	22.01.68	«Նյուրնբերգ» (Գերմ.)
8	Օհրել	07.04.68	«Սերվեթ»
9	Կնուռ	02.07.68	«Շտուտգարտ» (Գերմ.)
10	Սֆորցա	02.03.70	«Կայզերսլաուտեռն»
11	Շարյուիգա	28.06.69	«Բորուսիա» (Գերմ.)
12	Լեհմանն	15.08.63	«Սիոն»
13	Էգլի	08.05.58	«Սերվեթ»
14	Սուրիս	23.04.66	«Լուգանո»
15	Գրասի	08.08.68	«Սերվեթ»
16	Բիկել	06.10.63	«Գրասհոպերս»
17	Ֆուրնիյեր	27.06.71	«Սիոն»
18	Ռուեդա	09.01.63	«Լուգերն»
19	Շտուդեր	08.09.66	«Ցյուրիխ»
20	Սիկվեսսր	01.07.68	«Լոզան»
21	Վիս	29.08.66	«Սարաու»
22	Բրուներ	23.04.63	«Գրասհոպերս»

Ավագ մարզիչ Ռոյ Հոջսոն (Անգլիա)

ՌՈՒՄԻՆԻԱ

1	Պրունեա	08.08.68	«Դինամո» (Բուխար.)
2	Պետրեսկու	22.12.67	«Ճենովա» (Իտալիա)
3	Պորդան	23.03.72	«Սյյաուա»
4	Բելոդեդիչ	20.05.64	«Վալենսիա» (Իսպ.)
5	Լուպեսկու	09.12.68	«Բայեր» Լ. (Գերմ.)
6	Պոպեսկու	09.10.63	«Էյնդհովեն» (Հոլան.)
7	Մուսցյանու	25.06.68	«Բրյուգե» (Բելգիա)
8	Չիրիտա	02.02.67	«Ռապիդ» (Բուխար.)
9	Ռադուլոու	17.03.70	«Միլան» (Իտալիա)
10	Հաջի	05.02.65	«Բրեսցիա» (Իտալիա)
11	Դումիտրեսկու	06.01.69	«Սյյաուա»
12	Ստելեա	05.12.67	«Ռապիդ» (Բուխար.)
13	Սելիմես	14.05.70	«Բրյուգե» (Բելգիա)
14	Միհալի	09.12.65	«Դինամո» (Բուխար.)
15	Պանդուրու	11.07.70	«Սյյաուա»
16	Վլադոու	05.11.68	«Ռապիդ» (Բուխար.)
17	Մոլդովան	08.08.72	«Դինամո» (Բուխար.)
18	Գալգա	08.03.72	«Սյյաուա»
19	Պապուրա	5.09.73	«Ունիվերսիտատեա»
20	Ստինգա	05.12.72	«Ունիվերսիտատեա»
21	Իվան	01.06.69	«Բրաշով»
22	Պրեդա	18.06.70	«Պետրոլուլ»

Ավագ մարզիչ Անջել Հորդանեսկու

ՌՈՒՍԱՍՏԱՆ

1	Չերչեսով	02.09.63	«Դինամո» Դ. (Գերմ.)
2	Կուզնեցով	28.08.65	«Խորդանյոլ» (Իսպ.)
3	Գորլուկովիչ	19.11.61	«Բայեր» Վ. (Գերմ.)
4	Գալյամին	08.01.63	«Խորդանյոլ» (Իսպ.)
5	Նիկիֆորով	16.09.70	«Սպարտակ»
6	Տերնավսկի	02.0569	«Սպարտակ»
7	Պյատնիցկի	27.09.67	«Սպարտակ»
8	Պոպով	27.02.67	«Ռապինգ» (Իսպ.)
9	Սալենկո	25.10.69	«Վալենսիա» (Իսպ.)
10	Կարպին	02.02.69	«Սպարտակ»
11	Բեսչաստնիխ	01.04.74	«Սպարտակ»
12	Տեսրածե	13.10.69	«Դինամո» (Մոսկվա)
13	Բորդյուկ	30.11.62	«Ֆրայբուրգ» (Գերմ.)
14	Կոսենեա	04.09.67	«Խորդանյոլ» (Իսպ.)
15	Ռադչենկո	02.12.70	«Ռապինգ» (Իսպ.)
16	Խարին	16.08.68	«Չելսի» (Անգլիա)
17	Ցիմբալար	17.06.69	«Սպարտակ»
18	Օնոպկո	14.10.69	«Սպարտակ»
19	Սուսոլով	22.08.68	«Կաեն» (Ֆրանսիա)
20	Լեդյախով	22.05.68	«Սպարտակ»
21	Խլեբսով	21.01.71	«Սպարտակ»
22	Յուրան	11.05.69	«Բենֆիկա» (Պորտ.)

Ավագ մարզիչ Պավել Սադիրին

ԿԱՄԵՐՈՒՆ

1	Բելլ	08.10.54	«Սենտ Էտյեն» (Ֆրանս.)
2	Կանա Բիյիկ	01.09.65	«Հալը» (Ֆրանսիա)
3	Ս. Բահանագ	01.07.76	«Տոներե»
4	Էկկեմե Նդիքա	12.07.66	«Կանոն»
5	Նդիք Ամեն	28.08.67	«Օլիմպիկ»
6	Լիբին	17.11.67	«Մեդիոն»
7	Օմամ Բիյիկ	21.05.66	«Լենս» (Ֆրանսիա)
8	Մբու	30.05.66	«Նանտ» (Կաստար)
9	Միլա	20.05.52	«Տոներե»
10	Սֆեռե	26.02.61	«Կանոն»
11	Մաքոանգ	27.11.68	«Ռիյո Ավե» (Պորտ.)
12	Լոգա	14.08.69	«Պրեվոյանս»
13	Կ. Նկոնգո	22.04.75	«Կանոն»
14	Տաթավ Էտա	31.03.63	«Օլիմպիկ»
15	Ագբո	26.09.67	«Օլիմպիկ»
16	Չամի	14.02.71	«Օդենսե» (Դանիա)
17	Ֆոե	01.05.75	«Կանոն»
18	Ֆիալա	22.04.69	«Կանոն»
19	Էմբե	13.11.73	«Բելենենսես» (Պորտ.)
20	Մուլեմե	15.04.71	«Տրոյա» (Ֆրանսիա)
21	Նկոնո	20.07.56	«Հոսպիտալեթ» (Իսպ.)
22	Սոնգո	17.03.64	«Մեց» (Ֆրանսիա)

Ավագ մարզիչ Անրի Միշել

digitised by A.R.A.R.@

ԱԶԳ

Օրվա հետքերով

ՇՐՋԱՆ

Սկսվեց խաղաղարար ուժերի մուտքը Աբխազիա

Թբիլիսիի փողոցներում բորբոքվում են կրքերը

Հունիսի 15-ին սկսվեց խաղաղարար ուժերի մուտքն Աբխազիա: Որոշված է տեղաբաշխումն սկսել Ինգուրի գետի մերձակա անվտանգության գոտուց: Այդ մասին հայտարարեց Սուխումի ժամանած գործողության ղեկավար, Ռուսաստանի ղաշտպանության փոխնախարար Գրիգորի Կոնդրատենը: Պետք է վնասազերծվի մոտ 100 հազար ական: Աբխազական եւ վրացական զորքերը 12 կիլոմետր հեռավորության կիրավեն դիմակայության գծից: Գոյացած միջանցք կմտնեն Գալդուսում տեղաբաշխված ռուսական զորքերի 345-րդ դեսանային գնդի մի գումարտակ, եւ Անդրկովկասի ռուսական զորքերի մենկական գումարտակ Բաթումից ու Ախալքալաքից: Եւ երբ հունիսի 21-ին Պետդումայի դաշնության խորհուրդը հավանություն տա, ապա ԱՊՀ խաղաղարարների թիվը կհասցվի մինչեւ 2,5 հազարի:

ԱՊՀ խաղաղարար ուժեր մտցվելով կառակցությամբ Վրաստանում քաղաքական իրադրությունը բարդացել է: Թբիլիսիում անցկացվում են ընդդիմադիր ուժերի չարտոնված հանրահավաքներ, որոնք բորբոքում են խաղաղարար ուժեր Աբխազիա մտցնելու մասին ղեկավարի եւ խորհրդարանային մեծամասնության որոշման դեմ:

Իրավիճակները շատ կոշտ են վերաբերվում հանրահավաքների մասնակիցների նկատմամբ: Բանը հասավ Ռոյթեր գործակալության Թբիլիսիում հավատարմագրված թղթակիցներից մեկի ծեծին, որից հետո Վրաստանի ՆԳՆ մամլո կենտրոնն իր հայտարարությամբ հրաժարականներն ներողություն խնդրեց:

Կրքերը բորբոքված են ոչ միայն Թբիլիսիի փողոցներում, այլեւ խորհրդարանում: Սակայն Վրաստանի ղեկավար Էդուարդ Շեւարդնաձեն խորհրդարանի եռանդուն ղաշտպանությամբ ընդդիմությանը մեղադրեց այն բանում, թե նա չի ներկայացնում Վրաստանի ազգային շահերը: Էդուարդ Շեւարդնաձեն խորհրդարանականներին հիշեցրեց, որ դեռ 1993 թ. Սուխումի ճակատամարտի ժամանակ ինքն ասել է, որ Աբխազիայի խնդրի լուծման բանալին գտնվում է Մոսկվայում:

Ռուսաստանում Վրաստանի Հանրապետության դեսպան Վալերիան Աղվաձեն կարծիքով, այն փաստը, որ Ռուսաստանում ինչպես քաղաքագետներ, այնպես էլ զինվորականներ ձեռնամուխ են եղել կարգավորմանը, վկայում է նախկին ԽՍՀՄ տարածքում հակամարտությունների լուծման առումով Ռուսաստանի խաղաղարար կարողությունների մասին:

Վրաց-աբխազական հակամարտության գոտի խաղաղարար ուժեր մտցնելու Ռուսաստանի նախագահ Բորիս Ելցինի հրամանագրի բոլոր կետերն անբեղծորեն կատարելու վճռականության մասին է վկայում նաեւ այն, որ խաղաղարար ուժերի դեմ սադրանքների ձեռնարկման դեպքում բոյլատրված է կրակել:

Մասնավորապես Մոսկվայում հունիսի 15-ին ռուսական ցամաքային զորքերի գլխավոր հրամանատար, գեներալ-գնդապետ Վլադիմիր Սեմյոնովը լրագրողներին հայտարարեց. «Վրաց-աբխազական հակամարտության գոտի ռուսական խաղաղարար ուժերի զորաբաժին մտցնելիս ենթադրվում է հնարավոր ամեն ինչ անել ռուսաստանցի զինծառայողների կյանքն առավելագույնս անվտանգ դարձնելու համար»: Նա նշեց, որ Ինգուրի գետի երթանում ենթադրվում է տեղանքի ականազերծումից բացի ինժեներային կառույցներ ստեղծել հսկիչ անցակետերի տեղաբաշխման վայրերում: Այդուհանդերձ, չի բացառվում չվերահսկվող վրացական եւ աբխազական ելուզակախմբերի սադրանքների հնարավորությունը: Գեներալ Սեմյոնովի խոսքերով, ռուսաստանցի զինծառայողներին իրավունք է տրված իրենց կյանքին սպառնացող վտանգի դեպքում դիմել ամեն տեսակ միջոցների: Գեներալի կարծիքով, սկսված գործողության հաջողությունը մեծապես կախված կլինի ռուս խաղաղարարների մուտքի արագությունից: Նրա խոսքերով, հաղթությունը կարող է անկանխատեսելի հետեւանքներ ունենալ: Ռ.Գ.

ԱՇԽԱՐՀ

Մաֆիան տարածվում է դեպի Արեւելք

ՓԱՐԻԶ, 17 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ճապոնական, չինական, իտալական, ամերիկյան մաֆիաները խորհրդաժողով են անցկացնում եւ դայմանավորվում ազդեցության գոտիների միջազգային բաժանման շուրջը: Հանցախարհը, որն արդեն վերահսկում է համաշխարհային տնտեսության մի զգալի մասը՝ տարեկան մինչեւ հազար միլիարդ դոլար, շարունակում է զարգանալ գլխադոտյա վերելքով, նրա ֆինանսական հզորությունն անընդհատ աճում է: Աշխարհում կազմակերպված հանցաշխարհի ազդեցության աճի այսդիսի անմխիթարական դատկեր գծեցին միջազգային գիտաժողովի մասնակիցները, որը հունիսի 17-ին ավարտվեց Փարիզում: Այն անց էր կացնում Ֆրանսիայի մայրաքաղաքի քրեագիտության ինստիտուտը: Նախկին կոմունիստական դետություններում, նշվեց գիտաժողովում, կազմակերպված հանցաշխարհն անիշխանություն է հարուցում շուկայական տնտեսության ձեւավորման նախնական փուլում եւ վախեցնում է լրջմիտ կաղիտալ ներդրողներին: Միջազգային հանցաշխարհը արդեն դրսեւորվում է դեպի Եւրոդայի արեւելք: Դանգ է ներկայացնում կազմակերպված հանցագործությունների վերելքը Ռուսաստանում, որտեղ մաֆիան կարող է հասնել միջուկային բաղադրատարրերին: Ավելի լավ չէ վիճակը Արեւմուտքում, որտեղ դրամատներն ու ֆինանսական կառուցվածքները որդես գործիք են օգտագործվում կեղտոտ փողերը «լվանալու» համար: Ամերիկացի դիվանագետ Կրեսենսիյո Արկոսը հաղորդեց, որ հետաքննությունների ֆեդերալ բյուրոն Ռուսաստանի կազմակերպված հանցաշխարհի վերաբերյալ տվյալների հատուկ զեկուցան է դատրաստում, որդեսզի հնարավորություն ունենա հակազդելու սդառնալիքին:

Իսրայելը ազատ է արձակել 4900 դաղեստինցի կալանավորների

ԹԵԼ ԱՎԻՎ, 17 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Իսրայելը բանտերից ազատեց 4900-ից ավելի դաղեստինցի կալանավորների, դրանով իսկ կատարելով Դաղեստինի ազատագրման կազմակերդության հանդեդ ստանձնած դարտավորությունները: Այդդիսի հետեւության հանգեցին անվտանգության հարցերի իսրայելա-դաղեստինյան համատեղ փոխկառակցման հանձնաժողովի հինգշաբթի կայացած նիստի մասնակիցները: Մինչդեռ կալանքի տակ մնում են եւս մոտ 5000 դաղեստինցիներ, որոնց բվում, ինչդես դնդում են Իսրայելի դաշտոնական ներկայացուցիչները, հիմնականում նրանք են, ովքեր դատարդվել են ահաբեկչական գործունեության համար կամ հրաժարվում են ահաբեկչության ու բռնացման գործողություններին այսուհետեւ չմասնակցելու գրավոր դարտավորություն տալ:

Ջորջ Սորոսի եկամուտը 1 միլիարդ դոլար

ՆՅՈՒ ՅՈՐՔ, 17 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մ. Նահանգներում անցյալ տարի ամենաբարձր վարձատրվող ֆինանսիստը դարձավ Ջորջ Սորոսը: Նա առնվազն 1,1 միլիարդ դոլար է ստացել, գլխավորելով մի ամբողջ շարք ինվեստիցիոն հիմնադրամների կառավարիչների խորհուրդները: 63-ամյա Սորոսը հիմնադրամների միջոցով «կառավարում է» ընդհանուր հաշվով 11 միլիարդ դոլարի հասնող կաղիտալ, խաղալով հիմնականում միջազգային արժութային ու ֆոնդային սակարաններում, ինչդես նաեւ փողեր ներդնելով զանազան նախագծերի մեջ: Բայց այս տարի նա սայթաքեց, միայն մեկ օրում փետրվարի 15-ին, կորցրեց 600 միլիոն դոլար՝ սխալ կանխագուշակում անելով, թե ճապոնական իենի փոխարժեքը կբարձրանա՝ իջնել:

Եվրոդայում ամերիկյան զինվորները կրճատվում են

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ԱՐՄԵՆՊՐԵՍ-ԻՏԱՐ-ՏԱՍՍ: Մ. Նահանգները մտադիր են մոտ ժամանակներս լիովին փակել կամ զգալիորեն կրճատել գործողությունների ծավալը Եւրոդայում տեղաբաշխված իրենց 27 ռազմակայաններում եւ ռազմական այլ օբյեկտներում, հայտարարեց Պենտագոնի ներկայացուցիչ Քեսլին Գեյամին: Այդ օբյեկտների «կարգավիճակի փոփոխման» հետեւանքով, ավելացրեց տիկին Դեյամին, այդտեղից դուրս կբերվեն 5655 զինծառայող: Կրճատումների ներկա փուլից հետո Եւրոդայում 826-ի կհասնի ամերիկյան ռազմական օբյեկտների ընդհանուր թիվը: Իր հերթին, Մեծ Բրիտանիայի դաշտդանության նախարարությունը դաշտոնապես հայտարարեց երկրի տարածքում ռազմաօդային եւ ռազմածովային ուժերի մի քանի բազաների, ինչդես նաեւ մեկ զինվորական հոլեցի փակման մասին: Նախարարությունը դա կատարում է 1991 թ. ընդունված ռազմական ծախսերի ու զինված ուժերի կրճատման ծրագրի շրջանակներում, հաշվի առնելով սառը դատերազմի ավարտը եւ անվտանգության դետական գերակայությունների փոփոխումը:

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

Հայ-ռուս ռազմական դայմանագիրը չի խանգարի

«Նոր օրի» խմբագիր Հակոբ Պողոսյանը Լոս Անջելեսից հաղորդեց, թե հունիսի 14-ին Փասադենայում Հայաստանի Ամերիկյան համալսարանի հոգաբարձական խորհրդի կազմակերդությամբ տեղի է ունեցել հանդիդում ՀՀ-ում Մ. Նահանգների դեսդան Հարի Գիլմորի հետ, որի ընթացքում վերջինս հայերեն եւ անգլերեն ելույթ է ունեցել Հայաստանի ու հայ ժողովրդի մասին եւ հույս հայտնել, որ «շնորհիվ հայաստանցիների եւ սփյուռքահայերի ծանր աշխատանքի, Հայաստանը կարող է նորից դառնալ խոստումի եւ հույսի երկիր»: Հանդիդմանը նախորդել է տեղի հայկական մամուլի ներկայացուցիչների համար դեսդանի մամլո ասուլիսը: Ի շարս այլ հարցերի արձարձվել է Ռուսաստան-Հայաստան ռազմական դայմանագրի հարցը: Դեսդան Գիլմորը հայտարարել է, որ թեեւ ինքը դեռեւս չի հասցրել ծանոթանալ դրա բովանդակությանը, սակայն չի կարծում, որ այդ դայմանագիրը կազդի Հայաստանին տրվող ամերիկյան մարդասիրական օգնությանը: «Հայաստանն իր ընտրությունն է, ասել է դեսդանը, եւ նրա իրավասությունների մեջ է մտնում նման համաձայնագրերի կնքումը ԱՊՀ շրջանակներում»:

Մամլո ասուլիսի եւ ընդունելության մասին, ավելի մանրամասն մեր առաջիկա համարում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հունիսի 24-ին ժամը 14:00-ին «Հրազդան» կինոդաստրոնի դահլիճում (հասցեն՝ Կիևյան 8) տեղի կունենա ՀՀ Ազգային Դարապիտակ Կոմիտեի հիմնադիր համաժողովը:

ՀԱՄԱՌՈՏ

Ֆիդելն անձնատուր չի լինում

ՍԱՆՏԱ ԴԵ ԴՈՆՈՍԵ, 17 ՀՈՒՆԻՍ, ԻՏԱՐ-ՏԱՍՍ-ԱՐՄԵՆՊՐԵՍ: «Ես մտադիր չեմ ոչ հրաժարական տալ, ոչ էլ հայրենիքից հեռանալ: Լավ կլիներ, եթե մի գեղեցիկ օր հնարավոր լիներ բողոքել աշխատանքը: Բայց ոչ հիմա: Կուբան ծանր ժամանակներ է ապրում, եւ, վախենում եմ, որ նման ժամանակ իմ հեռանալը կընկալվեր որդես դասալքություն», հայտարարեց Ֆիդել Կաստրոն:

ԱՄՆ-ն դատրաստ է կոալիցիա ստեղծել

ՎԱՇԻՆԳՏՈՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: ԱՄՆ-ի Կոնգրեսի լսումների ժամանակ դետքարտուղարի օգնական Շաուզ Ֆրիմանը հայտնեցրել է, որ եթե ՄԱԿ-ի անվտանգության խորհուրդը չընդունի ԱՄՆ առաջարկները Հս. Կորեայի նկատմամբ դատժամիջոցներ կիրառելու վերաբերյալ, ապա ԱՄՆ ստիպված կլինի առանձին կոալիցիա ստեղծել, որը կկարողանար ինքնուրույն իրականացնել դրանք:

Ռուսական դոլարներ Շվեյցարիայում

ԲԵՌՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Շվեյցարիան վերջին շրջանում բազում ցնցումներ է ապրում ֆինանսական սկանդալների դատճառով: Աղմկալի գործերը հետեւում են մեկը մյուսին: «Բիկան» տնտեսական ամսագիրը դնդում է, որ վերջին երեք տարիներին Ռուսաստանից Շվեյցարիայի բանկային հաշիվների վրա է փոխանցվել 53 միլդ դոլար:

Աշխարհամարտի 50-ամյակը միասին

ԲՈՆՆ, 17 ՀՈՒՆԻՍ, ՓԱՍՏ: Հունիսի 16-ին Գերմանիայի Բունդեսթագի նախագահ Ռիտա Զյուսմոնն իր առաջին գործընկերոջը, Իվան Ռիբկինին առաջարկել է համատեղ ծրագրով նշել երկրորդ համաշխարհային դատերազմի ավարտի հիսնամյա հոբելյանը: ՌԴ Պետդումայի նախագահը դրական դատասխան է տվել այդ առաջարկին: Համատեղ ծրագիրը կնշակվի արդեն այս տարի, իսկ իրագործումը նախատեսվում է 1995 թվականի մայիսին:

Եղանակը Հայաստանում

ԵՐԵՎԱՆԻ ՀՐ. ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆԻ
հունիս ամսի խաղացանկը

17, 26-ին	Ե. ՕՏՅԱՆ	«ՄԵՐ ԵՎ ԾԻԾԱՂ» (Երաժշտական կատակերգություն երկու գործողությամբ)
18, 19-ին	Յ. ԳՐՈՒՇԱՍ	«ԲԵԱՏՐԻՉԵ» (Տրագիկոմեդիա երկու գործողությամբ)
24-ին	Ռ. ՊԱՐՈՆՅԱՆ	«ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ» (Կատակերգություն երկու գործողությամբ)
25-ին	ՌՖ. ՇԵՔՍՊԻՐ	«ՀՈՒԼԻՈՍ ԿԵՍԱՐ» (Ողբերգություն երկու գործողությամբ)

Ներկայացումների սկիզբը ժամը 15:00-ին
Թատրոնի գեղարվեստական ղեկավար՝ ԱՐՄԵՆ ԽԱՆԴԻԿՅԱՆ

Բժշկական գիտությունների դոկտոր, դրոֆեսոր Էդուարդ Երվանդի Դանիելյանը
Բուժում է մասնակային հիվանդություններ, կոսմետիկ արատներ եւ միգասեռական ուղիների բորբոքումներ:
Հասցեն. Մետրոդոլիտենի «Բարեկամություն» կայարան, Կոմիտասի 12, բն. 8. Հեռ. 23-76-67, 25-87-50:
Ժամերը՝ երեքշաբթի, հինգշաբթի, ժ. 17-19, շաբաթ, կիրակի ժ. 11-14:

«Պարբերական» հրատարակչության տպարան, Երեւան 23 Արշակունյաց 2 Գրանցման թիվ 65. Դասիչ 69149. Տպաքանակ 15 000. Պատվեր 1784. Ստորագրված է տպագրության՝ 17. 06. 1994 Գինը՝ 5 դրամ

digitised by A.R.A.R.@